

# Ապատեղեկատվությունն ու կեղծ տեղեկատվությունը Հայաստանում.

## դիմակայելով կեղծ պատմույթներին

# Ապատեղեկատվությունն ու կեղծ տեղեկատվությունը Հայաստանում.

## դիմակայելով կեղծ պատմույթներին

*2021-ի հունիս*

Freedom House-ը զեկույցի բովանդակության միակ պատասխանատուն է:

**Հետազոտական և խմբագրական կազմ**

Զեկույցի բաժինների հեղինակներն են Լուսինե Գրիգորյանը («Ընդհանուր գնահատական»), Արշալույս Բարսեղյանը («Սոցիալական և մշակութային խնդիրներ»), Աննա Փամբուխչյանը («Ժողովրդավարություն և քաղաքացիական հասարակություն»), և Արթուր Պապյանը («COVID-19 տեղեկատվական համավարակը»): Էլեն Աղեկյանը ղեկավարել է զեկույցի հետազոտական աշխատանքները: Զեկույցի կազմման գործում խմբագրական աջակցություն են ցուցաբերել Էփրիլ Գորդընը, Ջինա Լենթինը, Անդրանիկ Շիրինյանն ու Սոսի Թաթիկյանը: Մըքենզի Հիդըրն ապահովել է ծրագրային աջակցությունը:

*Cover image: Photo by David Pedanyan on Unsplash*

# Բովանդակություն

**Ներածություն** **4**

**Վերլուծաբանների կենսագրություններ** **6**

**Ընդհանուր գնահատական** **8**
Ապատեղեկատվության աղբյուրները 9
Ծանրացուցիչ գործոն. նոր լրատվամիջոցների պատկանելիությունն ու քաղաքական ազդեցությունը 11
Ապատեղեկատվությանը հակազդելու ջանքեր 12

**Covid-19 տեղեկատվական համավարակը** **15**
Առասպելներ և կեղծիքներ հանրային առողջության մասին 16
Հայացք COVID-19-ի կեղծ և ապակողմնորոշող պատմություններին 17
Ավելի լայն ենթատեքստ. լրատվամիջոցներ և քաղաքական միջավայր 18
Կեղծ տեղեկատվության հանդեպ խոցելիությունը. ներկայիս ազդեցությունը և հետևանքները 19

**Լեռնային Ղարաբաղի երկրորդ պատերազմը** **22**
Լեռնային Ղարաբաղի երկրորդ պատերազմը և Արծրուն Հովհաննիսյանի ֆենոմենը 23
Կանխամտածված պարտության և «վաճառված հողերի» պատմություններ 25
Առասպելներ արտաքին խաղացողների դերի մասին 27
Եզրակացություններ 28

**Ժողովրդավարություն և քաղաքացիական հասարակություն** **30**
Մեթոդական նշումներ 30
Քաղաքացիական հասարակության դերը Հայաստանում 31
Ապատեղեկատվությունը քաղաքացիական հասարակության դեմ Հայաստանում 32
«Արտասահմանյան գործակալներ» պատմույթը 33
Քաղաքացիական հասարակությունն ու ժողովրդավարությունը թուլացրեցին Հայաստանը և հանգեցրեցին ռազմական կորուստների 35
ՔՀԿ նախաձեռնությունների դեմ արշավներն ու դրանց հետևանքները հայկական ժողովրդավարության համար 36

**Սոցիալական և մշակութային խնդիրներ** **39**
Ստամբուլյան և Լանզարոտեի կոնվենցիաների մասին պատմույթներ 39
Հանրակրթության նոր չափորոշիչներ 43
Մշակութային իրադարձություններ 44
Եզրակացություններ 45

**Եզրակացություններ և առաջարկություններ** **46**

**Նշումներ** **50**

# Ներածություն

Էլեն Աղեկյան

Կեղծ պատմությունների բազմաթիվ ձևեր, ներառյալ կեղծ տեղեկատվությունն ու ապատեղեկատվությունը, լուրջ սպառնալիք են ներկայացնում ժողովրդավարական համակարգերի ամբողջականությանն ամբողջ աշխարհում: Հայաստանի նման երկրների ծաղկող ժողովրդավարության պարագայում այս երևույթը կարող է հատկապես վնասաբեր լինել, քանի որ ունակ է խաթարելու երկրի առաջընթացի համար հիմնարար կարևորություն ունեցող ինստիտուտների, գործընթացների և մոտեցումների զարգացումը:

Կեղծ և ապակողմնորոշիչ տեղեկատվության տարածումը Հայաստանի լրատվական դաշտի խնդիրներից էր: Այնուամենայնիվ, 2020 թվականի աննախադեպ մարտահրավերներն ավելի սրեցին կեղծ տեղեկատվության հանդեպ երկրի խոցելիությունը: Կեղծ և աղավաղված պատմություններն արդեն ազդել են երկու կարևոր իրադարձությունների՝ COVID-19 համավարակի և Լեռնային Ղարաբաղի երկրորդ պատերազմի վերաբերյալ հայերի ունեցած փորձի վրա: Քանի որ հայերը կրելու են այս ճգնաժամերի հետևանքները, կեղծ տեղեկատվությանը դիմակայելը առանցքային նշանակություն է ունենալու շարունակական վերականգնման, պետության և քաղաքացիների միջև վստահության կառուցման և երկրի՝ ժողովրդավարական ապագայի հանդեպ նվիրվածությունը պաշտպանելու համար:

Այս զեկույցը հրապարակելով՝ մենք մի քանի նպատակ ենք հետապնդում: Մենք ցանկանում ենք նախ և առաջ ուշադրություն հրավիրել Հայաստանում շրջանառվող կեղծ տեղեկատվական պատմությունների խստության, բարդության և ձևի վրա, և գնահատել երկրում ժողովրդավարական զարգացման առկա ռիսկերը:

Այդ նպատակով այս զեկույցը վերլուծում է Հայաստանում շրջանառվող հիմնական պատմությունները հետևյալ չորս թեմաների շուրջ՝ Ժողովրդավարություն և քաղաքացիական հասարակություն, COVID-19 համավարակ, Լեռնային Ղարաբաղի երկրորդ պատերազմ և Սոցիալական ու մշակութային խնդիրներ: Յուրաքանչյուր բաժին նպատակ ունի բացահայտելու կեղծ պատմությունների տարածմանը նպաստող ընդհանուր աղբյուրներն ու համակարգերը, և ներկայացնելու այն խոցելի կողմերը, որոնք այդ պատմություններն ապահովում են հենասյուներով և հասարակության վրա ազդելու զորությամբ: Ի վերջո, այս զեկույցը կոչ է պետությանը, ԶԼՄ-ներին, քաղաքացիական հասարակությանը և միջազգային գործընկերներին՝ ավելի ուժեղ հակազդելու այդ խոցելի կողմերին՝ հատուկ ուշադրություն դարձնելով դիմակայման կայուն մեխանիզմների կառուցման վրա:

Մենք նաև նպատակ ունենք աջակցելու առողջ տեղեկատվական դաշտի զարգացմանը, ինչն անհրաժեշտ ենք համարում ժողովրդավարության համար: Այս զեկույցը չի ենթադրում, որ կեղծ պատմությունները ծագում են Հայաստանի քաղաքական դաշտի միայն մեկ կողմից, կամ՝ կեղծ տեղեկատվությունը միշտ որոշակի արժեքային համակարգի հետ նույն գծով է գնում: Փոխարենը մենք կցանկանայինք շեշտել, որ

կեղծ տեղեկատվությունն ու ապատեղեկատվությունն առհասարակ վտանգ են ներկայացնում հայերի հավաքական ապագայի համար: Հույս ունենք, որ նպաստում ենք տեղեկատվական դաշտի զարգացմանը, որում փաստերի վրա հիմնված բանավեճը գերազանցում է տեղեկության շահարկմանն ու կեղծիքին:

Վերջապես, մենք ցանկանում ենք ձայն տալ Հայաստանի հետազոտողներին, որոնք նվիրումով աշխատում են դիմակայել կեղծ պատմություններին, նպաստել երկրի լրատվական միջավայրի բարելավմանը, խթանել մեդիագրագիտությունը և անում են շատ ավելին: Նրանց աշխատանքը վկայում է կեղծիքները վիճարկող տեղական ձայների հզորության մասին, և մենք հուսով ենք, որ այդ ձայներով են առաջնորդվելու ապագայի ջանքերը՝ կեղծ տեղեկատվությունից պաշտպանելու Հայաստանի ժողովրդավարական ուղին:

Մի քանի մեթոդաբանական դիտարկում՝ ըստ հերթականության: Բանավոր խոսքում որոշ փոխկապակցված տերմիններ, որոնք հաճախ փոխարինում են իրար, օգտագործվում են՝ նկարագրելու ապակողմնորոշող կամ սխալ տեղեկատվությունը: Այս զեկույցը վերլուծում է մի շարք պատմույթներ՝ ներառյալ բացահայտ կեղծիքները, աղավաղումները, շահարկվող պատմույթներն ու առասպելները: Զեկույցի վերլուծության հիմնական միավորն են կազմելու ապատեղեկատվության մեջ արմատացած պատմույթները: *Ապատեղեկատվությունն* ապակողմնորոշելու և վնաս պատճառելու համար դիտավորությամբ ստեղծված և տարածված տեղեկատվությունն է: *Սխալ կամ կեղծ տեղեկատվությունը* տեղեկատվություն է, որը տարածվում է առանց վնասելու մտադրության, ինչպես, օրինակ, այն տեղեկատվությունը, որ տարածել են անհատները՝ անտեղյակ, որ տեղեկատվությունը կեղծ է: Հայաստանի բարդ տեղեկատվական դաշտում անհնար է վերլուծել ապատեղեկատվության հետևանքները՝ առանց հաշվի առնելու դրանք զարգացնող համակարգերն ու նրանց վարքագիծը, այդ թվում՝ կեղծ տեղեկատվության համակարգումը: Բոլոր հնարավոր դեպքերում զեկույցը բացահայտում է կեղծ տեղեկատվության տարածման քաղաքական, սոցիալական, նորմատիվային կամ այլ դրդապատճառները:

Վերլուծական նպատակներով զեկույցի հեղինակներն օգտագործել են թարմ տեղեկատվական արշավներ ու պատմույթներ, որ լավագույնս արտացոլում են Հայաստանում կեղծ տեղեկատվության և ապատեղեկատվության խնդիրը:

Հետազոտողներն ազատորեն ուսումնասիրել են հայերեն և ռուսերեն լեզուներով տեղեկություններ՝ տարածված տարատեսակ հարթակներում՝ ներառյալ սոցիալական ցանցերը, առցանց լրատվամիջոցները, հեռուստատեսությունը և տպագիր մամուլը, ինչպես նաև ներքին և արտաքին, պետական և ոչ պետական աղբյուրները՝ հաշվի առնելով տվյալ երկրին բնորոշ լեզուն:

Կարևոր է նշել, որ այս զեկույցում վերլուծված պատմույթները սահմանափակվում են միայն *Հայաստանում* բնակվող մարդկանց թիրախավորող դեպքերով, օրինակ՝ չի դիտարկվել Հայաստանի կամ հայկական սփյուռքի մասին արտաքին ընկալումները թիրախավորող կեղծ տեղեկատվությունը:

# Վերլուծաբանների կենսագրություններ

**Արշալույս Բարսեղյանը**
Հայաստանում ապրող և աշխատող լրագրող է: Նրա հետաքրքրությունների կենտրոնում փաստերի ստուգման լրագրությունը և բաց աղբյուրներով հետաքննություններն են (OSINT), ինչպես նաև կեղծ տեղեկատվության և մանիպուլյացիաների բացահայտումը: Աշխատանքային թեմաները ներառում են հակամարտություններ, ազգային քաղաքականություն, առողջապահություն, սոցիալական և գենդերային խնդիրներ: Արշալույսը նաև ուշադրությամբ հետևում է հայաստանյան տեղեկատվական միջավայրին, նա փաստերի ստուգման և մեդիագրագիտության տարածման ջատագով է:

**Լուսինե Գրիգորյանը**
մեդիագրագիտության մասնագետ է՝ մեդիա հետազոտությունների, մեդիակրթության և լրագրության փորձով: Աշխատում է Մեդիա նախաձեռնությունների կենտրոնում (ՄՆԿ), որտեղ համակարգում է մեդիագրագիտության և փաստերի ստուգման կրթական ծրագրեր՝ սերտ համագործակցելով Հայաստանի ԿԳՄՍՆ-ի, հանրակրթական դպրոցների, բուհերի և ոչ պետական կազմակերպությունների հետ: Նա համահեղինակել և խմբագրել է դասախոսների, մանկավարժների և ուսանողների համար նախատեսված ուսումնական ձեռնարկներ և թվային խաղեր: Լուսինեն դասավանդում է մեդիագրագիտություն և փաստերի ստուգում Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանում: Նրա հոդվածներն ու հետազոտական աշխատանքները տպագրվում են ՄՆԿ-ի «Media.am» հարթակում, հայկական և միջազգային այլ ամսագրերում: Լուսինեն ունի Լոնդոնի Համալսարանական քոլեջի թվային մարդաբանության մագիստրոսի կոչում, ԵՊՀ լրագրության բակալավրի և մագիստրոսի կոչում:

**Աննա Փամբուխչյանը**
Երևանում հաստատված մեդիափորձագետ է և հետազոտող: Համագործակցում է «Հանուն ժողովրդավարության Եվրոպական հիմնադրամի» (European Endowment for Democracy) հետ՝ որպես Հայաստանից ներգրավված խորհրդատու, և Խաղաղության Եվրոպական ինստիտուտի հետ՝ որպես Արևելյան Եվրոպայի տարածաշրջանային վերլուծաբան: Նախկինում Աննան աշխատել է Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի (ԺՀՄԻԳ) ընտրությունների դիտորդական առաքելության մեդիա մշտադիտարկող և որպես «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ-ում ԶԼՄ-ների դիտարկման նախագծերի համակարգող: Աննան ավարտել է Կենտրոնական Եվրոպական համալսարանը և Եվրոպայի քոլեջը: Նրա մասնագիտական հետաքրքրությունները ներառում են սառեցված հակամարտությունները Արևելյան գործընկերության տարածաշրջանում, ինչպես նաև լրատվամիջոցների և համացանցի ազդեցությունը քաղաքականության, հակամարտությունների և ազգային ինքնության վրա:

**Արթուր Պապյանը**
թվային անվտանգության մեդիա խորհրդատու է և հանդիսանում է «Մեդիա բազմազանության ինստիտուտ - Հայաստանի» տնօրենը: Արթուրն ավելի քան տասը տարի «Ազատություն» ռադիոկայանի հայաստանյան ծառայությունում աշխատել է որպես լրագրող և մուլտիմեդիա խմբագիր: 2018 թվականին համահիմնադրել է Ազատություն TV առցանց ալիքն ու աշխատել որպես ալիքի գործադիր տնօրեն: Վերջին տարիներին Արթուրը առցանց մեդիայի, համացանցային լրագրության և մասնագիտական լրագրության դասընթացներ է վարել տարբեր համալսարաններում, այդ թվում՝ Երևանի պետական համալսարանում:

# Ընդհանուր գնահատական

Լուսինե Գրիգորյան

Շատ երկրների պես, Հայաստանն այսօր բախվում է մարտահրավերների տեղեկատվական դաշտում՝ ներառյալ կեղծ տեղեկատվությունը, ապատեղեկատվությունը և կեղծ պատմույթների փոխկապակցված ձևերը: Թեև ապատեղեկատվության որոշ ձևեր նախկինում նույնպես տարածված էին հեռարձակող մեդիայում, վերջին տարիներին առցանց լուրերի և սոցցանցերի օգտագործման կտրուկ աճը նոր լայն հնարավորություններ ստեղծեց՝ ապատեղեկատվության արագ տարածման և ընդլայնման համար: Այսօր պետական, ոչ պետական, ներքին և արտաքին դերակատարներն ակտիվորեն մասնակցում են կեղծ պատմույթների տարածմանը Հայաստանում՝ հաճախ օգտագործելով տեղեկատվական արշավները քաղաքական իշխանություն ձեռք բերելու կամ դրա ապագան ձևավորելու համար: Այս երևույթը դարձել է Հայաստանի՝ 2021 թվականի տեղեկատվական դաշտը հստակ բնորոշող գիծ, ինչպես նաև առանցքային խոչընդոտ նրա ներկայի և ապագայի համար: Մինչ երկիրը պայքարում է 2018 թվականի Թավշյա հեղափոխության ժողովրդավարական գաղափարների ինստիտուցիոնալացման, Լեռնային Ղարաբաղի երկրորդ պատերազմի և COVID-19 համավարակի ողբերգական հետևանքների հաղթահարման և ապագայի ընդհանուր պատկերացման սահմանման համար, գերիշխող պատմույթների շուրջ պայքար է ծավալվել քաղաքացիական և քաղաքական կյանքում: Կեղծ տեղեկատվությունն ու մանիպուլյացիաները նպաստում են հասարակության պառակտմանը, և թիրախավորելով պետության, քաղաքացիների և քաղաքացիական հասարակության միջև հարաբերությունները՝ խաթարում են երկրի ժողովրդավարական զարգացումը:

Ընդհանուր պատկերը դիտարկելիս՝ վերջին տարիների կեղծ պատմույթների մեծ մասը ծավալվել է չորս թեմայի շուրջ՝ COVID-19 համավարակ, Լեռնային Ղարաբաղի երկրորդ պատերազմ, սոցիալական և մշակութային խնդիրներ, քաղհասարակություն և ժողովրդավարություն: Հատկանշական է, որ այս բոլոր թեմաների վերաբերյալ կեղծ պատմույթներում նկատելի են ընդհանուր գծեր, մասնավորապես այն, որ «արևմտյան գործակալներն» ու «Սորոսը» փորձում են քանդել պետությունը, երկրի անվտանգությունը և ազգային ավանդույթները:[1] Զեկույցի հետագա բաժիններում այս պատմույթները հանգամանորեն կվերլուծվեն:

Այսօր Հայաստանում կեղծ պատմույթների կարևորությունը հասկանալու համար կարևոր է խնդիրը դիտարկել 2018 թ.-ին երկրի քաղաքական վերափոխման համատեքստում, երբ ժողովրդական ընդվզումը կարողացավ հասնել նախկին նախագահ Սերժ Սարգսյանի հրաժարականին, առաջնորդ կարգեց «Իմ քայլը» դաշինքին և երկրում սկիզբ դրեց ժողովրդավարական փոփոխություններին: Սերժ Սարգսյանի և նրա ղեկավարած Հանրապետական կուսակցության (ՀՀԿ)՝ ասպարեզից հեռանալուց հետո, ժողովրդավարական հիմնական ցուցանիշները բարելավվեցին՝ ներառյալ համացանցի և լրատվամիջոցների ազատությունը, ինչպես նաև ընդհանուր քաղաքացիական ազատություններն

ու քաղաքական իրավունքները: Այնուամենայնիվ, այս նշանակալի անցումից հետո Հայաստանի քաղաքական և հասարակական միջավայրում նույնպես բևեռացման նշաններ ի հայտ եկան:[2] Երբ նախկին ռեժիմը կորցրեց իշխանությունը, էլիտայի վաղեմի ներկայացուցիչները ներդրումներ արեցին ԶԼՄ-ներում՝ փորձելով դրանց միջոցով վարկաբեկել նոր կառավարությանը, Թավշյա հեղափոխությունն ու դրա արժեքները՝ հաճախ առաջ մղելով պատմություններ, որոնք «Իմ քայլը» և նրա գաղափարները ներկայացնում էին որպես «օտար» և «կործանարար» հայկական պետության համար: Քարոզչությունը, տեղեկատվական մանիպուլյացիան և համակարգված կեղծ տեղեկատվական հոսքերը մեծամասշտաբ էին 2020 թվականին, երբ հասարակությունը բախվել էր կորոնավիրուսային համավարակին և Լեռնային Ղարաբաղի երկրորդ պատերազմին:

Չնայած քաղաքական պատեհապաշտությունը կեղծ տեղեկատվության արմատներից մեկն է՝ երկրի տեղեկատվական դաշտի շատ հանգամանքներ սրում էին վիճակը և հնարավորություններ ստեղծում ապատեղեկատվության տարածման համար: COVID-19 համավարակի և Լեռնային Ղարաբաղի երկրորդ պատերազմի ֆոնին քարոզչությունը, սխալ տեղեկատվությունը և կառավարության անհետևողական հաղորդակցությունը շատ ավելի խոցելի դարձրին Հայաստանի տեղեկատվական դաշտը՝ ստեղծելով տեղեկատվական վակուում, շփոթմունք և հասարակության պառակտում, ինչը և հաջողությամբ օգտագործեցին ապատեղեկատվության գործակալները:

Ապատեղեկատվության ֆենոմենը այնքան համատարած էր վերջին երեք տարիների ընթացքում, որ քաղաքացիական հասարակությունը, մեդիա փորձագետները, իրավապաշտպանները և քաղաքական գործիչները, այդ թվում՝ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը, բազմաթիվ առիթներով քննարկել են խնդիրը: Քաղաքացիական հասարակությունը բազմաթիվ կոչեր ու հայտարարություններ է տարածել՝ ապատեղեկատվության վտանգների և դրան դիմագրավելու անհրաժեշտության մասին: Պետությունը որոշ դեպքերում փորձել է օրենսդրորեն կարգավորել խնդիրը, բայց այդ ջանքերը չեն եղել համապարփակ և ցույց են տվել, որ քաղաքականություն մշակողներն ամբողջությամբ չեն ընկալում ապատեղեկատվության երևույթը, չեն տարբերակում այն, օրինակ, ատելության խոսքից կամ զրպարտությունից:

Մեդիագրագիտության թեմայով վերջին հետազոտությունները ցուցում են ապատեղեկատվության հանդեպ հասարակության մեծ խոցելիությունը:

Օրինակ, Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի և Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստանի (ՀՌԿԿ) կողմից 2019 թվականին արված ուսումնասիրությունը բացահայտեց լրատվամիջոցների սպառման վարքագիծ, որը հայ լսարանին ավելի ընկալունակ է դարձնում է տեղեկատվական հոսքի նկատմամբ: Հարցին, թե ստուգու՞մ են արդյոք լրատվական կայքի հղումները, որում հայտնվում են այլ կայքի միջոցով, ինչպիսիք են սոցիալական ցանցերը, հարցվածների 34 տոկոսը պատասխանել է «ոչ», իսկ 24 տոկոսը պատասխանել է «հազվադեպ», և միայն 6 տոկոսն է հայտնել, որ միշտ ստուգում է նորությունների հղումները:[3] 2019-ին նույնպես Իրազեկ քաղաքացիների միավորումը (ԻՔՄ) հրապարակեց ԶԼՄ-ների սպառման հարցման արդյունքները, որում հարցվածների կեսից ավելին հայտնել էր, որ չի փորձում ստուգել իր լսած լուրերի իսկությունը:[4] Շատ մտահոգիչ է, որ հարցվածների մոտ կեսը նաև հաղորդել է, որ դժվար է (33 տոկոս) կամ բացարձակապես անհավանական է (8 տոկոս) տարբերակել կեղծ և ճշմարիտ տեղեկությունը:[5]

## Ապատեղեկատվության աղբյուրները

Գրեթե բոլոր հարթակներում կարելի է դիտարկել սուտ և մանիպուլացված լրատվության տարբեր ձևեր՝ ներառյալ ապատեղեկատվությունը: Այնուամենայնիվ, ապատեղեկատվության ամենախայտառակ օրինակները նկատելի են շատ բարձր դիտողականություն ունեցող հարթակներում՝ մասնավորապես՝ հեռուստատեսությունում և սոցիալական մեդիայում: Սոցիալական մեդիան ավելի մեծ նշանակություն ձեռք բերեց երկրի հասարակական-քաղաքական կյանքի համար 2018 թվականից հետո, երբ վարչապետ Փաշինյանն ընտրեց Facebook ցանցի գրառումները և ուղիղ հեռարձակումները՝ որպես հասարակության

հետ իր կապի հիմնական միջոց: 2019 թ. ԻՔՄ-ի հետազոտության համաձայն՝ հայերը պետական պաշտոնյաների Facebook-յան էջերը համարում էին հիմնականում հուսալի, միաժամանակ սոցիալական մեդիան համարելով տեղեկատվության ոչ այնքան հուսալի աղբյուր՝ ավելի մեծ վստահություն հայտնելով հեռուստատեսության և ռադիոյի նկատմամբ:[6] Առցանց հանրային դիսկուրսի մեծ մասը կենտրոնացած է Facebook հարթակում, թեև 2020 թվականի պատերազմի ընթացքում հայաստանցիները սկսեցին ակտիվորեն օգտվել նաև Twitter և Telegram սոցիալական հարթակներից:[7]

Հեռարձակող լրատվամիջոցները ազդեցիկ են Հայաստանում: Ըստ լրատվամիջոցների սպառման մասին Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնի 2019 թ. ուսումնասիրության՝ հայերի 72 տոկոսն ամեն օր դիտում է հանրային հեռուստաալիքներ, և տեղեկատվության համար ավելի հաճախ ապավինում հեռուստատեսությանը:[8] Նույն ուսումնասիրության մեջ «Առցանց աղբյուրներ և սոցիալական լրատվամիջոցներ» անվանակարգը տեղեկատվության ամենից հաճախ օգտագործվող աղբյուրների ցանկում երկրորդն է (հարցվածների 57 տոկոսը հայտնել է ամենօրյա օգտագործման մասին), դրան հաջորդում են տեղական հեռուստատեսությունը (40 տոկոս), ռուսական հեռուստաալիքները (26 տոկոս) և կաբելային/արբանյակային/վճարովի հեռուստաալիքները (25 տոկոս):[9] Առցանց լրահոսին հետևողների 83 տոկոսը հայտնել է, որ սոցիալական լրատվամիջոցների միջոցով կարող է օգտվել առցանց լրատվությունից, մինչդեռ միայն 17 տոկոսն է հայտնել, որ ստանում է տեղեկատվություն անմիջապես լրատվական կայքից:[10]

Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի «Media.am»-ի թիմի կողմից 2021 թ. մարտ ամսին արված հետազոտությունն անդրադառնում է Հայաստանում ապատեղեկատվության տարածման աղբյուրներին ու ռազմավարություններին: Ուսումնասիրության արդյունքում ապատեղեկատվության հիմնական աղբյուրներ են բնորոշվել նախորդ վարչախմբի հետ կապված լրատվամիջոցները, գաղափարական խմբերի հարթակներն ու ռուսական կայքերը:[11] Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ կեղծ պատմությունները տարածվում են նաև սոցիալական մեդիայի ազդեցիկ օգտատերերի (influencer), խմբերի և ալիքների, ինչպես նաև յուրահատուկ բովանդակություն չստեղծող, լրատվություն պատճենող, կիսազվարճացնող և կիսալրատվական կայքերի՝ այսպես կոչված «սունկ-կայքերի», ինչպես նաև նախկին քաղաքական ռեժիմի և այլ քաղաքական ուժերի հետ կապվող հեռուստատեսային և առցանց լրատվամիջոցների միջոցով:[12] Փաստերի ստուգմամբ զբաղվող տեղական կազմակերպությունները պարզել են, որ սոցիալական մեդիայում ազդեցություն ունեցող անձինք, որոնք առնչվում են հստակ քաղաքական ուժերի հետ, տարածել են ապատեղեկատվություն: Օրինակ՝ Վատիկանում ՀՀ նախկին դեսպան, ՀՀ նախկին նախագահ Սերժ Սարգսյանի փեսա Միքայել Մինասյանը սոցիալական ցանցերում հաճախ թողարկում է տեսանյութեր և մենախոսություններ, որոնք իբրև թե բացահայտում են գործող իշխանությունների չարագործությունները: Փաստեր ստուգող անկախ կազմակերպությունները կարծում են, որ նրա պնդումներից շատերը պարզապես կեղծ են, հիմնված մանիպուլացված տվյալների վրա կամ ներկայացված են համատեքստից դուրս:[13]

Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի՝ 2020 թ. հունիսին լույս տեսած ուսումնասիրությունը պարզել է, որ միջազգային լուրերը լուսաբանելիս հայկական լրատվամիջոցները, ներառյալ պետական ԶԼՄ-ները, մեծամասամբ որպես աղբյուր են օգտագործում ռուսական լրատվամիջոցները, և երբեմն պարզապես վերահրապարակում են դրանց լուսաբանումները:[14] Զեկույցից պարզ է դառնում, որ այս գործընթացը ավելացնում է կեղծ կամ աղավաղված լուրերի ազդեցությունը, և հասկանալի չէ, թե ռուսական աղբյուրները ստուգելիս ինչ ստանդարտների կամ ընթացակարգերի են հետևում հայկական լրատվամիջոցները:[15] Հայաստանի հանրային մուլտիպլեքսի երեք հաճախականություն հատկացվել է ռուսական երեք ալիքի՝ պետական «ВГТРК», «Ռուսաստան-Կ» և «1-ին ալիք Ռուսաստան» հեռուստաընկերություններին:[16] Այս տեղերը տրամադրվել են մրցույթից դուրս՝ հիմնվելով 2020 թվականի դեկտեմբերին կնքված հայ-ռուսական միջպետական նոր համաձայնագրի վրա. «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ նոր օրենքում միջազգային պայմանագրերը նշվում են որպես բացառություն:[17]

Ինչ վերաբերում է տեղական լրատվամիջոցների և հաստատված կեղծ տեղեկատվություն տարածող ռուսական աղբյուրների փոխկապակցվածությանը, ապա Հայաստանում հաճախ կարելի է նկատել

«մատրյոշկայի» էֆեկտը. առցանց լրատվամիջոցները պատճենում են նորություններ ռուսական կայքերից, այնուհետև այլ աջակցող տեղական լրատվամիջոցներ վերաթողարկում են տեղեկությունը՝ ամեն մեկը որպես հղում նշելով նախորդին, այդ կերպ ավելի մեծացնելով բնօրինակ հաղորդագրության տարածումը: Օրինակ, «Media.am»-ի վերլուծաբանները այս մարտավարությունը կորոնավիրուսի լուսաբանման դեպքերում նկատել են «News.am», «Tert.am» և «168.am» հայկական կայքերում, որոնք բոլորն էլ փոխկապակցված են նախկին քաղաքական առաջնորդների կամ նրանց դաշնակիցների հետ:[18]

Փաստերի ստուգման անկախ հարթակի նմանակումը ևս կեղծ տեղեկատվության տարածման մարտավարություններից մեկն է Հայաստանում: «Antifake.am» կայքը, որը հիմնադրել է «Քաղաքացիական գիտակցություն» ՀԿ-ն, պնդում է, որ այն անաչառ է, անկախ և նվիրված է ներկայիս կառավարության «ստերը» բացահայտելու գործին: Այնուամենայնիվ, կայքը պարբերաբար հրապարակում է չստուգված պնդումներ կամ սխալ տեղեկություններ: «Antifake.am»-ի բովանդակությունը հիմնականում կենտրոնանում է Հայաստանում «Սորոսի գործակալների» և «օտարերկրյա դերակատարների» պատմույթների վրա: Տեղական և միջազգային անկախ փաստերի ստուգման հարթակների հետաքննությունների համաձայն՝ այս նախաձեռնության հիմքում ընկած անձինք սերտորեն առնչվում են ծայրահեղական ռեակցիոն խմբերի հետ, ինչպիսիք են «ՎԵՏՕ»-ն և «Ադեկվադ»-ը,[19] որոնք, իրենց հերթին, կապված են նախկին քաղաքական ռեժիմի հետ և ապատեղեկատվության հզորացման համար կիրառում են ԶԼՄ-ների և սոցիալական մեդիա հաշիվների մի ամբողջ ցանց:[20] Սա հատկապես վտանգավոր երևույթ է. փաստերի ստուգման կեղծ քողի օգտագործումը ոչ միայն օգնում է այս հարթակներին տարածել կեղծիք և ավելի հավաստի ներկայացնել կեղծ տեղեկատվությունը, այլև խաթարում է վստահությունը պրոֆեսիոնալ, անկախ փաստերի ստուգման նախաձեռնությունների հանդեպ:

## Ծանրացուցիչ գործոն. նոր լրատվամիջոցների պատկանելիությունն ու քաղաքական ազդեցությունը

ԶԼՄ-ների սեփականատերերի թափանցիկության խնդիրը կարևոր ծանրացուցիչ գործոն է ապատեղեկատվության հարցում: Թափանցիկության բացակայությունը խանգարում է մարդկանց կշռադատել գործոնները, որ ազդում են լրատվամիջոցների վրա և հասկանալ նրանց կողմնակալությունը: Չնայած «Տեսալողական մեդիայի մասին» 2020 թ. օրենքը հեռարձակող լրատվամիջոցներից պահանջում է ավելի ծավալուն հաշվետվություն և ֆինանսական թափանցիկություն, Հայաստանում հեռուստաընկերությունների պատկանելիության հարցը մնում է մշուշոտ, և քաղաքական կուսակցությունների հետ դրանց կապերը սովորաբար ի հայտ են գալիս հետաքննական լրագրության միջոցով: Կան ապացույցներ, որ մի շարք խոշոր մասնավոր հեռուստացանցեր պատկանում են կամ կապված են ՀՀԿ, Հայ Հեղափոխական Դաշնակցություն կամ Բարգավաճ Հայաստան կուսակցությունների հետ, և որ ազդեցիկ լրատվական ռեսուրսներից մի քանիսը կապվում են ՀՀ նախկին նախագահ Ռոբերտ Քոչարյանի անվան հետ. լրատվամիջոցի պատկանելիությունը հաճախ ակնհայտ է դառնում կողմնակալ լուսաբանման մեջ:[21] Վարչապետ Փաշինյանը, ով նախկինում եղել է լրագրող, շարունակում է պահպանել կապերը մամուլի հետ, այդ թվում՝ «Հայկական ժամանակ» թերթի միջոցով, որի խմբագիրն իր կինն է: Պատկանելիության վերաբերյալ տեղեկությունը հատկապես դժվար է պարզել առցանց լրատվամիջոցների դեպքում, ինչը սպառողներին մղում է ենթադրություններ անելու ըստ լուսաբանման կամ մնալ անորոշության մեջ:[22]

Պետական պաշտոնյաների պահվածքը երբեմն սրում կամ հրահրում է սխալ տեղեկատվության ու շահարկումների տարածումը: Պետական համակարգը դանդաղ և անհետևողական է լրագրողների դիմումներին պատասխանելու հարցում, և հաճախ ի զորու չէ հստակ և ժամանակին տեղեկություններ հաղորդել թե՛ լրագրողներին, թե՛ հասարակությանը: Ավելին՝ պաշտոնյաները սխալ հաղորդակցություն են վարել այնպիսի զգայուն թեմաներով, ինչպիսիք են պատերազմն ու դրա հետևանքները, ինչն ավելացնում է տեղեկատվական վտանգներն ու անապահովության միջավայրը: Օրինակ, 2021 թ. ապրիլին նախ՝ լրատվամիջոցները, իսկ ավելի ուշ՝ նաև պաշտոնյաները, հայտարարեցին Ադրբեջանից ռազմագերիների խմբի վերադարձի մասին, ինչի արդյունքում ռազմագերիների ընտանիքների շատ անդամներ լցվել

էին սպասումով, և հասարակությունն ուղիղ հեռարձակմամբ հետևում էր իրադարձություններին:[23] Երբ պարզվեց, որ վերադարձող ինքնաթիռում ռազմագերիներ չկան, գործող իշխանությունը չկարողացավ բացատրություն տալ և մեկ օր անց ներողություն խնդրեց «սխալ տեղեկատվության» համար, այն բանից հետո, երբ ռուս խաղաղապահները հայտարարեցին, որ Ադրբեջանը չէր համաձայնել ազատել ռազմագերիներին:[24]

Լեռնային Ղարաբաղի երկրորդ պատերազմի ընթացքում և դրանից հետո Ադրբեջանի պետական քարոզչությունն անվերահսկելի տարածում էր գտել սոցցանցերում և ադրբեջանական լրատվական կայքերում: Որոշ դեպքերում քարոզչությունը թիրախավորում էր միջազգային լսարանին, այդ թվում՝ հայերին: Ադրբեջանական աղբյուրներից սնվող պատմությունները հայկական մեդիա ասպարեզում միանշանակ չընդունվեցին, և փաստերի ստուգման դաշտում գործողները շտապեցին հետաքննել ամենանշանակալից պատմությունները՝ փարատելու և ցրելու առասպելները:[25] Այնուամենայնիվ, ադրբեջանական տեղեկատվական գործողությունների հետևանքները նշանակալի էին Հայաստանում, հատկապես, որ դրանք ներառում էին ոտնձգություններ սոցիալական մեդիայի օգտատերերի (այդ թվում՝ զինծառայողների ընտանիքների) նկատմամբ, ինչպես նաև համակարգված սոց. մեդիա արշավների միջոցով կեղծ տեղեկությունների տարածում:[26]

## Ապատեղեկատվությանը հակազդելու ջանքեր

Ապատեղեկատվության դեմ պայքարում Հայաստանի քաղաքացիական հասարակության հիմնական օրակարգը ներառում է անկախ լրատվամիջոցների հզորացում, լրատվամիջոցների պատկանելիության և ֆինանսավորման թափանցիկության ձեռքբերում, լրատվամիջոցների ինքնակարգավորման մեխանիզմների խթանում, փաստերի ստուգման նախաձեռնություններ և մեդիագրագիտության ուսուցում: Փաստերի ստուգման մեջ մասնագիտացած տեղական երկու խոշոր մեդիա հարթակ է գործում՝ Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի «Media.am»-ը, և Փաստերի ստուգման հարթակը (Fip.am), որը հիմնել է Իրազեկ քաղաքացիների միավորումը: Մեկ այլ նմանատիպ նախաձեռնություն՝ «Infocheck.am»-ը, հիմնել է ՀՀ Վարչապետի աշխատակազմը: Վերջինս տրամադրում է կառավարության վերաբերյալ ապատեղեկատվության հերքում, բայց նույնքան քննադատաբար չի վերաբերվում պետական պաշտոնյաների հայտարարություններին:[27]

Մեկ այլ կարևոր նախաձեռնություն է Երևանի մամուլի ակումբի ԶԼՄ-ների էթիկայի դիտորդ մարմինը, որն ինքնակարգավորվող մարմին է, ստեղծվել է 2007 թվականին և այժմ միավորում է ավելի քան 60 լրատվամիջոցների, որոնք ստորագրել են մասնագիտական էթիկայի կանոնակարգը և համաձայնել դիտարկել քաղաքացիների կողմից լրատվամիջոցների դեմ հայցերի վերաբերյալ դիտորդ մարմնի որոշումները:[28] «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքում 2020 թ. արված փոփոխությունների համաձայն՝ մասնագիտական էթիկայի կանոնագիրը և ինքնակարգավորման մեխանիզմները պարտադիր են դարձել լիցենզավորող մրցույթներին մասնակցող հեռարձակող մեդիայի համար, թեև այդ միջոցների ավելի լայն կիրառումն անորոշ է մնում:[29]

Մինչ քաղաքացիական հասարակությունը կողմ է հանդես գալիս ինքնակարգավորմանը, մեդիակրթությանը և ապատեղեկատվության երկարաժամկետ լուծումների համար ռազմավարական պլանավորմանը, պետությունը խոշոր հաշվով կարճաժամկետ կամ անկանոն ջանքեր է գործադրում: 2020 թ. ապրիլին, երկրի տեղեկատվական դաշտը COVID-19 համավարակի դիմակայման ջանքերին իբրև թե համապատասխանեցնելու նպատակով իշխանությունները սահմանափակեցին լրատվամիջոցների հնարավորությունները՝ թույլատրելով լուսաբանել միայն COVID-19-ի վերաբերյալ պաշտոնական աղբյուրների հիման վրա, սակայն տեղական և միջազգային դժգոհության ֆոնին շուտով վերացրին սահմանափակումները:[30] 2020 թ. Լեռնային Ղարաբաղի երկրորդ պատերազմի ժամանակ իշխանությունների ներդրած սահմանափակումների արդյունքում լրագրողները ստիպված էին պատերազմի մասին տեղեկատվություն ստանալու համար ապավինել միայն պաշտոնական

աղբյուրներին:[31] Այս զեկույցի հեղինակները քննարկել են, թե ինչպես այդ սահմանափակումներն ու պետական կառույցների թույլ հաղորդակցությունը համատեղ նպաստեցին Հայաստանում կեղծ տեղեկատվության և ապատեղեկատվության հոսքին:

Վերջին տարիներին օրենսդիր իշխանությունը մի շարք փորձեր է ձեռնարկել՝ օրենքների միջոցով արձագանքելու տեղեկատվական դաշտի խնդիրներին, այդ թվում՝ փոփոխություններ կատարելով նաև Քրեական օրենսգրքում: «Իմ քայլը» խմբակցության պատգամավոր Ալեն Սիմոնյանի ներկայացրած և 2021 թ. մարտ ամսին ընդունված օրինագծի համաձայն՝ եռապատկվելու էին վիրավորանքի և զրպարտության համար առավելագույն տույժերը՝ դառնալով համապատասխանաբար 3 և 6 միլիոն ՀՀ դրամ (մոտավորապես 5,700 և 11,400 ԱՄՆ դոլար):

Տեղական և միջազգային ԶԼՄ-ները, այդ թվում՝ Freedom House-ը, քննադատել են այս օրենսդրական նախաձեռնությունը, որը վտանգում է խոսքի ազատությունը և ԶԼՄ-ների ֆինանսական կենսունակությունը, և հորդորել իշխանություններին զերծ մնալ ազատ խոսքի տուգանման միջոցով առողջ տեղեկատվական դաշտ ստեղծելու ջանքերից:[32] ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանը չի ստորագրել այդ օրենսդրական նախագիծը՝ ուղարկելով այն Սահմանադրական դատարան՝ վերանայման:[33] 2021 թ. փետրվար ամսին քննարկված մեկ այլ օրինագիծ առաջարկում էր արգելել լրատվամիջոցներին հղում կատարել «սոցիալական ցանցերի անանուն աղբյուրներին»՝ հիմնավորելով, որ նախագիծը կօգնի դիմակայել սոցիալական ցանցերի կեղծ ալիքներին և կանխել լրատվամիջոցների կողմից ապատեղեկատվության տարածումը:[34]

Լրատվամիջոցների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կառույցները խիստ քննադատաբար են վերաբերվել այս միջոցառումներին՝ պատժամիջոցներն անվանելով «անկախ լրատվամիջոցների դեմ մահակ»:[35] Այս քննադատությունն առաջ բերեց մի կարևոր հանգամանք. նմանօրինակ օրենսդրությունը կարող է լինել բութ գործիք, և ապատեղեկատվության դեմ պայքարի քողի տակ կարող է հեշտությամբ կիրառվել օրինական ազատ խոսքի և լրագրողական գործունեության դեմ: Նմանատիպ միջոցները պատեհային բնույթ են կրում, հաճախ անարդյունավետ են արագ փոփոխվող առցանց լրատվադաշտում և չեն կարողանում տարբերակել խնդրահարույց վարքագծի տեսակները՝ միատեսակ մոտեցում ցուցաբերելով այնպիսի խնդիրների հանդեպ, ինչպիսիք են զրպարտությունն ու ապատեղեկատվությունը:[36]

Նմանապես, խնդրահարույց են Ազգային անվտանգության ծառայության (ԱԱԾ)՝ ապատեղեկատվության հետևում կանգնած մարդկանց հայտնաբերելու փորձերը:[37] Չնայած վարչապետ Փաշինյանը հայտարարում էր, որ խոսքի ազատությունն ավելի կարևոր է, քան «կառավարությանը կեղծ լուրերից պաշտպանելը»,[38] 2019 թ. ապրիլի 4-ին նա ԱԱԾ-ին հրամայեց խստորեն հետևել հասարակական կարծիքը մանիպուլացնող լրատվամիջոցներին կամ սոցիալական ցանցերի օգտատերերին՝ ներկայացնելով դա որպես ազգային անվտանգության խնդիր:[39] Վերջին երեք տարվա ընթացքում առնվազն երեք դեպք է գրանցվել, երբ ԱԱԾ-ն Facebook սոցիալական ցանցի օգտահաշիվների ետևում կանգնած անհատներին բերման է ենթարկել բռնություն հրահրելու, ատելության խոսք տարածելու կամ ազգային անվտանգությանը սպառնացող հիմքերով:[40] Անհասկանալի է մնում, թե ինչպես է ԱԱԾ-ն տվյալ դեպքերում գնահատում սպառնալիքը կամ հանցավորությունը, քանի որ «կեղծ լուրերը» բացահայտելուն և պատժելուն ուղղված նման լայն կոչերը կարող են խախտել ազատ արտահայտվելու իրավունքը:

Պատերազմից ի վեր հայ հասարակությունը բախվում է հակամարտության հետևանքներին, հընթացս փոփոխվում են պետության և լրատվամիջոցների վերաբերյալ հանրային ընկալումները: 2021 թ. Միջազգային հանրապետական ինստիտուտի (IRI-Armenia) հետազոտության արդյունքների համաձայն՝ պատերազմից հետո պետական մարմինների աշխատանքի վերաբերյալ հասարակական կարծիքի անկում է նկատվում: Վարչապետի աշխատակազմի աշխատանքի վերաբերյալ դրական կարծիքը 2019 թ. 72 տոկոսի համեմատ նվազել է՝ 2021 թ. հասնելով 54 տոկոսի, Ազգային ժողովի դեպքում իջել է 32 տոկոս

2019 թ. 62 տոկոսի համեմատ:[41] Չնայած Հայաստանի հասարակության վերաբերմունքն ու սպասելիքները լրացուցիչ հետազոտություն են պահանջում՝ անհերքելի է, որ հայաստանցիները պատերազմից հետո ճշմարտություն և հավաստի տեղեկատվություն են փնտրում մարտերի բռնկման, դրանց վարման, հրադադարի հայտարարության և դրա հետևանքների վերաբերյալ: Այս փնտրտուքը տեղի է ունենում երկրի ապագայի հանդեպ անորոշության, ազգային անվտանգության և ինքնիշխանության խոցելիության, պատերազմի և կորուստների հուզական ցնցումների ֆոնին: Իշխանությունների կողմից հետևողական և հստակ հաղորդագրությունների պակասի, ինչպես նաև ապատեղեկատվության դեմ պայքարի ուժեղ ռազմավարության բացակայության պատճառով Հայաստանի հասարակությունը մնում է անտեղյակ և խոցելի տեղեկատվական վակուումը լրացնող կեղծ պատմությունների հանդեպ:

Քանի դեռ երկրի տեղեկատվական միջավայրն անտեսված է, հասարակական անկեղծ դիսկուրսը և լրագրողական պրոֆեսիոնալ աշխատանքը կշարունակեն զիջել առասպելներին, կեղծ պատմություններին և թիրախավորված կեղծ տեղեկատվական արշավներին: Նման արշավներն օգտագործում են հասարակության պառակտումները, խարխլում քաղաքացիական հասարակությունը և կասկածի տակ առնում ժողովրդավարությունը, ուստի խնդրի անտեսումը վտանգում է Հայաստանի ժողովրդավարական առաջընթացի հիմքերը: Մինչ հայաստանցիներն առերեսվում են 2020 թ.-ի հետցնցումներին և ընդհանուր ազգային տեսլականի կերտման դժվարություններին, այս պատմությունների տարածումը ավելի ու ավելի է նեղացնում դաշտը երկրի մարտահրավերների, հնարավորությունների և ապագայի վերաբերյալ փաստերի վրա հիմնված բանավեճերի և դիսկուրսների համար:

# Covid-19 տեղեկատվական համավարակը

*Արթուր Պապյան*

2020 թ. մարտից ի վեր, երբ երկրում հաստատվեցին Covid-19 համավարակի առաջին դեպքերը, Հայաստանը ծանր կորուստներ է կրել:[42] Իշխանությունները փորձում էին արձագանքել և զսպել վարակի տարածումը՝ ձեռնարկելով արտակարգ միջոցառումներ, բայց անհետևողական մոտեցումները, դժվարությունների առաջ կանգնած առողջապահական համակարգը և Լեռնային Ղարաբաղի երկրորդ պատերազմի լրջագույն մարտահրավերները ճնշեցին այդ ջանքերը, և հիվանդացության դեպքերի թիվն օրըստօրե աճում էր 2020 թ.-ի ընթացքում և 2021թ.-ի սկզբին: Կեղծ տեղեկատվությունն ու ապատեղեկատվությունը սոցիալական ցանցերում և առցանց նորություններում բարդացնում էին հանրային առողջապահության մարտահրավերները՝ նվազեցնելով հասարակության վստահությունը ճգնաժամերի կառավարման, կանխարգելիչ միջոցառումների և խոստումնալից պատվաստումների ջանքերի նկատմամբ:

2020 թ. առաջին կեսին կեղծ պատմույթները հիմնականում տարածվում էին նոր կորոնավիրուսի ծագման, Հայաստանում դրա տարածման և բուժման մեթոդների շուրջ: Աշխարհով մեկ հայտնի պատմույթները մուտք գործեցին նաև հայաստանյան տեղեկատվական դաշտ՝ ներառյալ բուժման բնական մեթոդների և միջոցների մասին առասպելները,[43] և դավադրության տեսություններն այն մասին, որ համավարակը կապված է 5G աշտարակներով ակտիվացված միկրոչիպեր տեղադրելու համաշխարհային արշավի հետ՝ մարդկանց հեռավար կարգով վերահսկելի դարձնելու համար:[44] Բանանի կամ COVID-19 թեստերի միջոցով տարածվող վարակի մասին առասպելները տարածվեցին երկրով մեկ:[45] Որոշ կեղծ պատմույթներ ներառում էին յուրահատուկ տեղական բաղադրիչ. դրանցից մեկի համաձայն՝ պետության՝ պաշտպանիչ դիմակներ կրելու առաջարկը կապված է ներքին կոռուպցիայի հետ: Մի հայտնի պատմույթ պնդում էր, որ պետական պաշտոնյաները շահույթ են ստանում դիմակների ներմուծումից, արտադրությունից և վաճառքից: 2020 թ. վերջին և 2021 թ. կեղծ պատմույթները կենտրոնացան դիմակների և պաշտպանիչ ձեռնոցների ազդեցության վրա, իսկ COVID-19-ի դեմ պատվաստանյութերի մշակման միջազգային առաջընթացին զուգահեռ՝ պատվաստանյութերի հետևանքների վրա:

Ժամանակ առ ժամանակ համավարակի մասին կեղծ տեղեկատվությունը նպատակ ուներ հարցականի տակ դնելու պետական պաշտոնյաների և իշխանության կոմպետենտությունը, ըստ երևույթին՝ քաղաքական նպատակներով: Նախկին իշխող էլիտան, ընդդիմադիր և քաղաքացիական խմբերը հաճախ առաջ էին քաշում կոմպետենտ չլինելու պատմույթը՝ ընդդիմանալու գործող իշխանությունների օրակարգին: Պաշտոնյաներն, իրենց հերթին, այս պատմույթների առաջացման համար պայմաններ էին ստեղծում՝ COVID-19-ի վերաբերյալ հակասական, թույլ և թերի պետական արձագանքով:

Համավարակի առաջին օրերին պետական պաշտոնյաները թերագնահատեցին COVID-19-ի լրջությունը և սխալ պնդումներ արեցին ոչ պատշաճ կարգի դիմակներ կրելու անարդյունավետության կամ վնասի վերաբերյալ:[46] Պաշտոնյաները մի քանի անգամ մեղմացրին և վերականգնեցին դիմակ կրելու կարգավորումները: Կառավարության համավարակային հաղորդակցության ռազմավարությունը տապալվեց ի սկզբանե: Մարտ ամսին վիրուսի տարածումը զսպելու համար ձեռնարկված արտակարգ միջոցառումների շրջանակներում, իշխանությունները լրատվամիջոցներին արգելեցին հաղորդել հանրային առողջության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն, որը ստացվում էր ոչ պաշտոնական աղբյուրներից: Այս սահմանափակումները երկար կյանք չունեցան. ներքին և միջազգային քննադատության ուժեղ ճնշման տակ կառավարությունը չեղյալ համարեց դրանք:[47]

Որոշ գործոններ հատկապես վտանգավոր էին դարձնում համավարակի վերաբերյալ կեղծ տեղեկատվությունն ու ապատեղեկատվությունը. տեղեկատվական դաշտը լցվել էր կեղծ պատմություններով, որոնք ջանում էին հանրության ուշադրությունը շեղել հանրային առողջության վերաբերյալ հրահանգներից և ուղղորդումներից: Թեպետ հասարակության շփոթության և թերահավատության որոշակի մակարդակ սպասելի էր համավարակի սկզբում, քանի որ ողջ աշխարհում առողջապահական համակարգի մասնագետներն ու պետական պաշտոնյաներն ամեն կերպ փորձում էին հասկանալ վարակի էությունն ու համապատասխան արձագանք տալ դրան, կեղծ և խեղաթյուրված տեղեկատվության հետևանքները երկարաժամկետ կտրվածքով սրեցին Հայաստանի հանրային առողջության վիճակը: Որոշ մասնագետներ և հայտնի հասարակական գործիչներ ստեղծում և հզորացնում էին վարակի վերաբերյալ ընդհանուր առմամբ բացասական պնդումներ՝ հայաստանցիներին խոցելի դարձնելով հատկապես ապատեղեկատվության հետևանքների նկատմամբ: Այս գործիչները հանրային առողջության համար վնասակար պատմություններ էին լեգիտիմացնում:

## Առասպելներ և կեղծիքներ հանրային առողջության մասին

Առողջապահական առասպելների տարածումը Հայաստանում սկսվեց դեռ COVID-19 համավարակից առաջ. հակապատվաստանյութերի դավադրության տեսություններն ակտիվացան հատկապես 2017 թ.-ին, երբ ՀՀ Առողջապահության նախարարությունը սկսեց պատվաստումների ծրագիր մշակել պապիլոմավիրուս հիվանդության դեմ (HPV):[48] COVID-19 համավարակի սկիզբը և պատվաստանյութի մշակման հետագա համաշխարհային ջանքերը վերստին հանգեցրին պատվաստումների մասին կեղծ պատմությունների առաջացմանը: Ապատեղեկատվական ահռելի արշավները ներառում էին պատմություններ այն մասին, որ, օրինակ, COVID-19 պատվաստանյութը Առողջապահության համաշխարհային կազմակերպության, Պատվաստումների և իմունիզացիայի գլոբալ դաշինքի (GAVI) և Բիլ Գեյթսի («Բիլ և Մելինդա Գեյթս հիմնադրամ») միջոցով Հայաստանի բնակչության քանակի կրճատման ծրագրի մաս է կազմում:[49] Այս պատմության ջատագովներից մեկը բժիշկ, «Paracelsus» ՀԿ-ի հիմնադիր և ղեկավար Նունե Ներսիսյանն էր, ով նույնպես ակտիվորեն խորհուրդ էր տալիս հրաժարվել դիմակներից՝ պնդելով, որ դիմակները վնասակար են առողջությանը:[50] Ներսիսյանի նման գործիչները նաև խթանում էին «համաշխարհային օրակարգի» կեղծ պնդումները, որոնց համաձայն՝ ստիպում են ներգրավել Հայաստանի բնակչությանը տարբեր պատվաստումների ծրագրերում, ինչպիսիք են, օրինակ, «Գարդասիլ» և COVID-19-ի դեմ պատվաստանյութերի կիրառման ծրագրերը:

Հանրային առողջության մասին նախա-համավարակային կեղծ պատմությունների մեկ այլ փունջ վերաբերում էր «արևմտյան կենսալաբորատորիաների» գոյությանը, մասնավորապես այն պնդմանը, թե Միացյալ Նահանգները կենսաբանական զենքի արտադրություն է ֆինանսավորել հայաստանյան լաբորատորիաներում: Այս պատմությունները պնդում էին, որ այդ լաբորատորիաները սպառնում են ոչ միայն հայերի առողջությանը, այլև նրանց ինքնիշխանությանն ու արտաքին կապերին, քանի որ լաբորատորիաների արտադրած զենքը Արևմուտքը կարող էր գործածել Ռուսաստանի դեմ: Այս պատմությունները սկիզբ էին առել «Հանուն ինքնիշխանության վերականգնման» ՀԿ-ի՝ հայաստանյան ինքնիշխանությանը նվիրված համաժողովի ժամանակ հնչած պնդումներից, որոնք հրապարակել

էր Ռուսաստանի պետական հովանավորությամբ գործող «Sputnik» լրատվամիջոցի տեղական մասնաճյուղը 2016 թվականին:[51] «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ-ի հետաքննության համաձայն՝ այլ տեղական լրատվամիջոցներ վերահրապարակել էին այդ պատմույթը, ինչը ՀՀ Առողջապահության նախարարությանը ստիպեց արձագանքել, որ տվյալ լաբորատորիաները իրականում ֆինանսավորում են ստացել նաև Ռուսաստանից, և որ հայկական պետական գործակալություններից մեկը օգտվում է այդ լաբորատորիաներից հիվանդությունների վերահսկման և կանխարգելման համար:[52] ԻՔՄ հետաքննությամբ պարզվեց, որ հիշյալ պատմույթները անմիջականորեն կապված են քաղաքացիական և քաղաքական խմբերի հետ, որոնք աջակցում են հայ-ռուսական հարաբերությունների սերտացմանը:[53]

Համավարակը նոր շունչ հաղորդեց այս պատմույթներին Հայաստանում, մասնավորապես երբ 2020 թ. ապրիլին Ռուսաստանի արտգործնախարարության խոսնակ Մարիա Զախարովան մտահոգություն հայտնեց նախկին ԽՍՀՄ հանրապետությունների տարածքում «ամերիկյան կենսալաբորատորիաների գոյության մասին»:[54] Այս լաբորատորիաները հաճախ արծարծվող թեմա դարձան 2020 թ.-ին հատկապես ապակողմնորոշող բովանդակության տարածմամբ հայտնի սոցցանցերի և լրատվամիջոցների շնորհիվ: «Ո՛չ ամերիկյան վիրուսածին լաբորատորիաներին» Facebook-յան էջը փորձում էր համախմբել հայերին այն գաղափարի շուրջ, թե ամերիկյան կենսալաբորատորիաներն են ստեղծել նոր կորոնավիրուսային վարակը:[55] Խմբի անդամները մայիս ամսին նույնիսկ փոքրիկ բողոքի ցույց էին կազմակերպել Երևանում,[56] որի ընթացքում կազմակերպիչներից մեկը պնդում էր, որ «լսել է այս մտահոգությունները բարեկամ երկրների բարձրաստիճան պաշտոնյաներից»՝ փորձելով այդպիսով հիմնավորել կորոնավիրուսի ծագման մասին այս պատմույթը:[57]

## Հայացք COVID-19-ի կեղծ և ապակողմնորոշող պատմույթներին

Կորոնավիրուսային հիվանդության մասին կեղծ տեղեկատվության և ապատեղեկատվության տարածման պատկերը բնորոշվում է լրատվամիջոցների, կազմակերպությունների և անհատների հստակ խմբով: Հակասական համբավ ունեցող բժիշկ Գևորգ Գրիգորյանի ղեկավարած «Medmedia.am»-ը վարակի մասին կեղծ պատմույթների ամենահայտնի աղբյուրն էր: Գրիգորյանը հայտնի է ԼԳԲՏ+ անձանց նկատմամբ ատելության հռետորաբանությամբ, Առողջապահության նախարարության ուղղված քննադատություններով և ծայրահեղ պահպանողական խմբերի հետ առնչությամբ: 2020 և 2021 թթ. նա չարաշահեց իր մասնագիտական լիազորությունները՝ սատարելով համավարակի, ինչպես նաև դրա կանխարգելման և բուժման միջոցառումների վերաբերյալ մի շարք փասակար պատմույթների:[58] 2020 թ. մայիսին Բաց ժողովրդավարության ինստիտուտի հետազոտությունը պարզեց, որ «Medmedia.am»-ի գործարկման համար օգտագործվել են ԱՄՆ դեսպանատան Ժողովրդավարության հանձնաժողովի փոքր դրամաշնորհների ծրագրի միջոցները:[59] «Medmedia.am»-ի ամենահայտնի հոդվածները ներառում էին հատվածներ, որոնցում COVID-19-ը անվանվում էր «կեղծ համավարակ»,[60] և հաղորդվում, թե դիահերձարանը կաշառել է մահացած անձանց ընտանիքներին՝ հայտարարելու, որ հիվանդի մահվան պատճառը կորոնավիրուսն է: Վերջին պատմույթը ծագել է վերոնշյալ Նունե Ներսիսյանի շնորհիվ: Հետաքննող լրագրողները չեն կարողացել այս պնդումները հաստատող ապացույցներ գտնել:[61]

Մի շարք բժիշկներ և հասարակական գործիչներ սատարում էին նաև դավադրության տեսություններին, որոնք հերքում էին COVID-19-ի գոյությունը՝ պնդելով, որ այն արհեստականորեն ստեղծվել է «մոլորակի գերբնակեցման խնդիրը լուծելու համար», և որ դեղագործական ընկերությունները ստեղծել են այս վարակը, որպեսզի ավելի շատ ապրանք վաճառեն:[62] Հայաստանի նախկին իշխող վերնախավի հետ կապված լրատվամիջոցներ, ինչպիսիք են՝ «ArmNews»-ը, «Blognews»-ը և «TV5»-ը, երբեմն կապում էին համավարակը Ջորջ Սորոսի անվան հետ և մոբիլիզացնում գոյություն ունեցող կեղծ պատմույթը Բաց հասարակության հիմնադրամների (ԲՀՀ-Հայաստան) միջոցով Հայաստանում այս բարերարի ենթադրյալ ազդեցության մասին:[63] Հայաստանում ծայրաստիճան պահպանողական խմբերը շատ հաճախ Ջ. Սորոսին

և ԲՀՀ-ին կեղծիքներ են վերագրում և դրանք ներկայացնում հասարակական կազմակերպություններում նախկինում ներգրավված պետական պաշտոնյաներին վարկաբեկելու համար (տե՛ս «Ժողովրդավարություն և քաղաքացիական հասարակություն» բաժինը):

Նյարդավիրաբույժ և հասարակական գործիչ Մարինա Խաչատրյանն ակտիվորեն տարածում էր անհիմն տեսություններ, որոնք կենտրոնանում էին կորոնավիրուսի տարածման գործում տեխնոլոգիաների և 5G-ի դերի վրա:[64] Զարգացած տեխնոլոգիական ձեռնարկությունների միության գործադիր տնօրեն, հանգուցյալ Կարեն Վարդանյանը նույնպես նպաստեց նմանատիպ պատմությունների տարածմանը. տեխնոլոգիական ոլորտում նվաճումները նրան զգալիորեն ազդեցիկ էին դարձրել հանրային դիսկուրսում: Սոցիալական ցանցերում Վարդանյանը տեխնոլոգիայի վերաբերյալ պատկերացումները միացնում էր գործող իշխանություններին ուղղված քննադատության հետ և 2020 թվականին սխալ տեղեկություն տարածում COVID-19-ի վերաբերյալ:[65]

Մինչ նշված դերակատարներն ու լրատվամիջոցներն ակտիվորեն մասնակցում էին լավ մշակված տեղեկատվական արշավների, սոցիալական ցանցերի օգտատերերի, էջերի և լրատվամիջոցների մեծ պահանջարկի պայմաններում միջավայրը խթանեց ապակողմնորոշիչ պատմությունների և սենսացիոն նորությունների տարածումը: 2020 թ-ի սկզբին YouTube-ի հայտնի վլոգերներ մտքեր էին շրջանառում առ այն, որ COVID-19-ն ի հայտ է եկել Չինաստանում չղջիկներ ու օձեր ուտելու պատճառով, կամ՝ վիրուսը կապ ունի չինական լաբորատորիաների հետ:[66] Թեև համաշխարհային բժշկական հանրությունը շահարկել է վիրուսի հնարավոր ծագման հարցը և հետաքննել բոլոր հնարավոր տարբերակները, այդ շրջանում չէր հայտնաբերվել վլոգերների պնդումները հաստատող որևէ գիտական ապացույց: Պարզապես այս լրատվամիջոցների կողմից կեղծ պատմությունների կամ աղավաղումների լուսաբանումն ունի ֆինանսական խթաններ և պետք է դիտարկվի հատուկ աշխարհայացքի կամ քաղաքական օրակարգերի հարող վերոհիշյալ հասարակական գործիչների կեղծ տեղեկատվական արշավներից անջատ:

## Ավելի լայն ենթատեքստ. լրատվամիջոցներ և քաղաքական միջավայր

2020 թ. սկզբին կեղծ տեղեկատվության և ապատեղեկատվության տարածումը կարող է որոշ չափով վերագրվել COVID-19 վարակի նորույթին և այն հասկանալու համար ամբողջ աշխարհի պայքարին: COVID-19-ի վերաբերյալ տեղեկատվության զարգացող բնույթը ներկայացրեց նոր և երբեմն հակասական եզրակացություններ մի շարք թեմաների վերաբերյալ՝ դիմակների արդյունավետությունից սկսած մինչև հիվանդության տարածումը. սա հանգեցրեց հասարակության շփոթմունքին և մարդիկ տենդագին սկսեցին պատասխաններ փնտրել: Բացի այդ, համապատասխան պետական գերատեսչությունների թույլ հաղորդակցական ռազմավարությունը խարխլեց համավարակի վերաբերյալ տեղեկատվական դաշտի ամբողջականությունը:

Հայկական լրատվական միջավայրի որոշ ասպեկտներ նպաստեցին COVID-19-ի վերաբերյալ կեղծ պատմությունների տարածմանը: Օրինակ, ամենատարածված պատմություններից նրանք, որոնք ներկայացնում էին COVID-19-ը որպես արևմտյան կամ ամերիկյան դավադրության սցենարով բնակչության վերահսկման կամ նոր աշխարհակարգի մի մաս, միևնույն ժամանակահատվածում ռուսական մեդիայում շրջանառվող նմանատիպ պատմությունների արձագանքն էին:[67] Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի «Media.am» նախագծի կողմից 2020 թ. հունիսին հրապարակված հետազոտական զեկույցում նշվում է, որ համավարակի լուսաբանման ժամանակ Հայաստանի երեք ամենահայտնի առցանց լրատվական կայքերը՝ «News.am», «Tert.am» և «Lurer.am»-ը, իրենց լուսաբանման բովանդակությունն առավել հաճախ հիմնել են Ռուսաստանի պետական «ՌԻԱ Նովոստի» և «ՏԱՍՍ» լրատվական գործակալությունների թողարկումների վրա:[68] Ըստ զեկույցի՝ հայկական մեդիան հաճախ «ծաղկեցրել» է նշված գործակալությունների մեկնաբանությունները, և ոչ թե հաղորդել դրանք՝ հիմնվելով առաջնային աղբյուրների վրա, անգամ այն դեպքում, երբ ճիշտ նույն տեղեկությունը հրապարակել են ԱՀԿ-ի նման կազմակերպություններ:[69]

COVID-19-ի վերաբերյալ ապատեղեկատվության էկոհամակարգում կան նաև քաղաքական կողմեր: Պատմությունների կատեգորիաներից մեկը կոմպետենտ չլինելն է. այս տեսանկյունից ՀՀ գործող իշխանությունն ի վիճակի չէ պայքարելու համավարակի դեմ, և կամ Ջորջ Սորոսի նման օտարերկրյա դերակատարների, կամ ԱՀԿ-ի ազդեցության տակ է: Չարամտությունը պատմությունների մեկ այլ կատեգորիա է. այդպիսի պատմությունները պնդում են, որ իշխանություններն օգտվել են վարակի առիթից մարդկանց մեջ միկրոչիպեր տեղադրելու կամ վերահսկողության այլ ձևեր կիրառելու համար: Ինչպես արդեն նշվեց, նման պատմությունների տարածման պատասխանատուն հաճախ Հայաստանի նախկին իշխող վերնախավին առնչվող առցանց մեդիան է, ինչպես նաև հասարակական գործիչները, որոնք միավորեցին COVID-19-ի «սպեկուլյացիան» կառավարությանն ուղղված քննադատության հետ:

Հայաստանի բժշկական հաստատություններում մինչ համավարակը տեղի ունեցած պառակտումը որոշ լրատվամիջոցների ջանքերով բացահայտ նախատրամադրվածություն ստեղծեց Առողջապահության նախարարության աշխատանքների լուսաբանման վերաբերյալ: 2018 թ-ին Առողջապահության նախարար Արսեն Թորոսյանը տեղեկատվական արշավների թիրախում էր «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոնի գործադիր տնօրեն Արա Մինասյանին աշխատանքից ազատելուց հետո:[70] Առողջապահության նախարարությունը մեղադրեց ազդեցիկ բժշկին՝ Մինասյանին, ում որդին՝ Միքայել Մինասյանը, ամուսնացած է ՀՀ նախկին նախագահ Ս. Սարգսյանի դստեր հետ, բժշկական կենտրոնի միջոցով պետական գումարների յուրացման մեջ: Իշխանությունները քրեական հետապնդում սկսեցին, սակայն Արա Մինասյանը թաքնվեց օրինապահներից:[71] Նրա որդին՝ Մ. Մինասյանը, որը զգալի քաղաքական և տնտեսական ազդեցություն ուներ Հայաստանում մինչ Թավշյա հեղափոխությունը, ենթադրաբար շարունակում է ազդեցություն ունենալ մի քանի հայտնի լրատվամիջոցների վրա, որոնց թվում են «Politik.am»-ը, «Իրավունք» թերթը և «Արմենիա» հեռուստաընկերությունը:[72] 2018 թ.-ին այս լրատվամիջոցների դեմ մեղադրանք ներկայացվեց՝ առողջապահության նախարարի մասին բազմաթիվ կեղծ կամ նենգափոխված պատմություններ տարածելու կապակցությամբ:[73] Այս համատեքստը կարևոր է համավարակի պայմաններում Առողջապահության նախարարության մասին ինչպես լուսաբանման, այնպես էլ ընկալման համար, մասնավորապես՝ քաղաքական նման հայացքներ ունեցող լրատվամիջոցների համատեքստում:

## Կեղծ տեղեկատվության հանդեպ խոցելիությունը. ներկայիս ազդեցությունը և հետևանքները

Մինչև 2020 թվականը COVID-19-ի դեմ պատվաստանյութի հանդեպ վստահեսները, դավադրության տեսաբանները և առողջապահության ոլորտի պաշտոնյաներին քննադատողներն արդեն ստեղծել էին տեղեկատվական մառախուղի միջավայր, որում COVID-19-ի վերաբերյալ կեղծիքները հեշտությամբ կարող էին արմատավորվել և քայքայել առողջապահական կառույցների նկատմամբ հասարակության վստահությունը: Որոշ «վստահելի» դերակատարներ՝ բժիշկներ և հասարակական գործիչներ, սրել են հանրային առողջապահական հաստատությունների նկատմամբ անվստահության միջավայրը՝ սուտ տեղեկություններ տարածելով համավարակի վերաբերյալ: ՀՌԿԿ-ի՝ 2020 թ.-ի հուլիսին անցկացրած ուսումնասիրության արդյունքում պարզվել էր, որ բնակչության առնվազն 9 տոկոսը կարծում է, որ Հայաստանում COVID-19-ի առկայության հիմնական պատճառը «համաշխարհային տերությունների կողմից քաղաքական/տնտեսական մրցակցությունն է», իսկ 6 տոկոսը կարծում է, որ «վիրուսը տարածում են օտարերկրացիները»:[74] Օգտագործման բարձր ցուցանիշների պատճառով սոցիալական մեդիայի և, մասնավորապես, Facebook-ի հայաստանցի օգտատերերը առավել խոցելի էին համավարակի կեղծ պատմությունների նկատմամբ:[75] Այս բաժնում վերլուծված ապատեղեկատվությունների բազմաթիվ ստեղծողներ և զարգացնողներ, այդ թվում՝ բժիշկներ ու քաղաքացիական առաջնորդներ, ակտիվորեն օգտագործում էին Facebook-ը՝ կեղծիքներ հրապարակելու և համավարակի վերաբերյալ շահարկումներ տարածելու համար, իսկ անհատները, խմբերը և էջերը հզորացնում էին «Medmedia.am»-ի նման կայքերի բովանդակությունը: Բժշկական կամ մեդիագրագիտության ցածր մակարդակ ունեցող

մարդիկ կարող են առավել ընկալունակ լինել COVID-19-ի վերաբերյալ կեղծ պատմությունների հանդեպ, և այդ խմբերի հետ աշխատանքը պետք է առաջնահերթություն համարվի բնակչությանը լավագույնս իրազեկելու տեսանկյունից:

2020 թ.-ի ողջ ընթացքում և 2021 թ.-ի առաջին ամիսներին կեղծ պատմությունները թիրախավորեցին համավարակի գրեթե բոլոր կողմերը՝ սկսած վիրուսի գոյությունից մինչև կանխարգելիչ միջոցառումներ: Թե՛ շփոթություն առաջացնելով, և թե՛ կասկածամտությունը խրախուսելով՝ այս պատմությունները քայքայեցին պետական պաշտոնյաների՝ նոր կորոնավիրուսային հիվանդության դեմ պայքարում Հայաստանի հասարակության համախմբվածությունն ապահովելու հնարավորությունը: 2020 թ.-ի սեպտեմբերին՝ համավարակի առաջին գագաթնակետից ընդամենը երկու ամիս անց, երբ սկսվեց Լեռնային Ղարաբաղի երկրորդ պատերազմը, հանրային առողջության վիճակը սարսափելի վատթարացավ: 44 օր տևած պատերազմը սպառեց ոչ միայն պետության ուշադրությունն ու ռեսուրսները, այլև երկրի առողջապահական համակարգի կարողությունները: Հանրության ուշադրությունը շեղվեց այլ ուղղություններով՝ պաշտպանության համար աջակցության կազմակերպում, տեղահանված անձանց խնամք, ելք գտնելու ջանքեր, պատերազմում զոհված հարազատների հուղարկավորություն... համավարակը դարձավ երկրորդական մտահոգություն: Շատերը դադարեցին դիմակներ կրել և ֆիզիկական հեռավորություն պահպանել հասարակական վայրերում: Պատերազմի առաջին ամսվա ընթացքում Հայաստանում հիվանդության ամենօրյա դեպքերի թիվն ավելացավ ութ անգամ, և պատերազմը որոշ բժշկական մասնագետների որակմամբ հանգեցրեց մարդասիրական աղետի:[76] Սեպտեմբերի 27-ին՝ պատերազմի առաջին օրվա դրությամբ, Հայաստանը հայտնել էր ընդհանուր առմամբ 49,000 դեպքի մասին: Պատերազմի ավարտին դեպքերի թիվը գերազանցեց 100,000-ը:[77]

ՀՀ-ում համավարակը շարունակում է մնալ առողջապահական ոլորտի գլխավոր մտահոգությունը, քանի որ վարակի երրորդ ալիքը ծանրաբեռնել է առողջապահական համակարգը 2021 թ.-ի գարնանից:[78] Հասարակական համախմբվածության ապահովումը կարևոր նշանակություն կունենա պետական պաշտոնյաների պատշաճ արձագանքման գործում և հետագայում առողջապահական ճգնաժամերի հանդեպ Հայաստանի դիմադրողականությունը բարձրացնելու համար: Պատմությունների այն խումբը, որը մեծացնում է՛ կորոնավիրուսի, և՛ դրա կանխարգելման հանդեպ կասկածամտությունը, խոչընդոտում է այս գործընթացին, և հայաստանցիների՝ իրենց առողջապահական համակարգի հետ ավելի լայն և կայուն հարաբերությունների ստեղծմանը: Բացի այդ, մի քանի կեղծ և ապակողմնորոշիչ պատմություններ կենտրոնացել են պատվաստանյութերի վրա: Զեկույցի այս հատվածը գրելու պահին Հայաստանում պատվաստանյութերի կիրառումը զգալիորեն ուշանում է՝ զիջելով հարավկովկասյան երկու հարևաններին:[79] Ազգային և համաշխարհային մակարդակում լայնամասշտաբ պատվաստումը շարունակում է մնալ համավարակի վերացման հիմնական միջոցներից մեկը: Հայաստանում վարակի դեմ պատվաստումը տեղի է ունենում կամավոր հիմունքներով, և գործընթացը կարող է լրջորեն վտանգվել ամիսներ տևած հակապատվաստման պատմությունների պատճառով: Առավել տագնապալի է, երբ նման տեսակետներին աջակցում են առողջապահական ոլորտի ներկայացուցիչները, քանի որ այդ դերակատարների վստահելիությունը կարող է շփոթություն առաջացնել և հայերին ետ պահել պատվաստվելուց:

Առհասարակ, COVID-19-ի վերաբերյալ կեղծ տեղեկատվության և ապատեղեկատվության հետևանքներն ազդում են քաղաքացիների և պետության փոխհարաբերությունների վրա: Համավարակն աննախադեպ ճնշում գործադրեց պետության վրա, որը շարունակում է պայքարել՝ պաշտպանելու հայաստանցիների առողջությունը, իրականացնելու կանխարգելիչ միջոցառումներ, իրազեկելու հասարակությանը, մեղմելու տնտեսական վնասները, ապահովելու ազգային և հանրային անվտանգությունը 2020 թ-ի կործանարար պատերազմի պայմաններում: Կանխարգելիչ միջոցառումները խափանող և կառավարության՝ COVID-19-ին պատշաճ արձագանքելու ունակության հանդեպ թերահավատություն առաջացնող կեղծ պատմությունների թիրախում են հանրային առողջապահական մարմինների նկատմամբ վստահությունը ու ճգնաժամային կառավարման համակարգերի ամբողջականությունը: Այս մարտահրավերները վտանգել են նաև 2018 թ. Թավշյա հեղափոխությունից ի վեր ունեցած փխրուն ժողովրդավարական

ձեռքբերումները, երբ մեկ տարի շարունակ իշխանություններին կոչ էր արվում հավասարակշռել հասարակության առողջությունը, անվտանգությունը և քաղաքացիական ազատությունները: Երկարաժամկետ հեռանկարում հասարակության վստահությունը պահելու և օրինականությունը պաշտպանելու պետության կարողությունն առանցքային կլինի ոչ միայն առողջապահական ճգնաժամին դիմակայելու, այլև երկրի վերականգնումը վերջին տարիներին տրված ժողովրդավարական խոստումներով առաջնորդելու համար:

# Լեռնային Ղարաբաղի երկրորդ պատերազմը

*Անանուն*

2020 թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի զինված ուժերը, Թուրքիայի աջակցությամբ, սկսեցին լայնամասշտաբ ռազմական հարձակում դե ֆակտո անկախ հայերեն տարբերակով «Արցախ» կոչվող Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դեմ. էթնիկ հայերով բնակեցված և ղեկավարվող տարածք, որին աջակցում է Հայաստանի Հանրապետությունը: Պատերազմը տևեց 44 օր, եղան հազարավոր զոհեր, և Լեռնային Ղարաբաղի զգալի մասի վերահսկողությունը փոխանցվեց ադրբեջանական ուժերին: 2020 թ. նոյեմբերի 10-ին Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը միջնորդեց Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի և Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի միջև հրադադարի մասին հայտարարությունը, որում ներառված էին տարածքային փոխանցումների, տեղահանվածների վերադարձի և ռուսական խաղաղապահ ուժերի տեղակայման պայմանները՝ ի թիվս այլ բաների:[80] Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը մնում է անորոշ. ՀՀ կառավարությունն ու Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) Մինսկի խումբը հակամարտությունը համարում են չլուծված:[81]

Հայերի համար Լեռնային Ղարաբաղն ունի խորը մշակութային նշանակություն և հանդիսանում է ժամանակակից ազգային պատմության կարևոր մասը: 1920-ականներին, երբ Հարավային Կովկասը Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության (ԽՍՀՄ) մաս դարձավ, Խորհրդային իշխանությունները ստեղծեցին Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը՝ բնակեցված հայ մեծամասնությամբ, Ադրբեջանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունում:[82] 1980-ականների վերջին Խորհրդային Ադրբեջանի ղեկավարությունը սկսեց ավելի խիստ քաղաքականություն վարել Լեռնային Ղարաբաղի նկատմամբ, քանի որ թուլացավ կենտրոնական Խորհրդային վերահսկողությունը, և Լեռնային Ղարաբաղի իշխանություններն ու էթնիկ հայերը սկսեցին շարժում՝ պաշտոնապես Հայաստանին միանալու համար: Անջատման խաղաղ շարժումը դեմ առավ ջարդերի և կոմունալ բռնության, և հակամարտությունն ընդլայնվեց՝ վերածվելով Լեռնային Ղարաբաղի առաջին պատերազմի՝ 1988-ից 1994 թվականներին:[83] Հայկական ռազմական հաղթանակով և 1994 թ. հրադադարով հաստատվեց Հայաստանի վերահսկողությունը Լեռնային Ղարաբաղի և հարակից տարածքների նկատմամբ, բայց ավելի լայն հակամարտությունը դարձավ Հայաստանի անկախ պետության հիմնական քաղաքական խնդիրը. Հայաստանը պատասխանատվություն ստանձնեց՝ դառնալու Լեռնային Ղարաբաղի հայերի անվտանգության երաշխավորը: Պատերազմից ի վեր հակամարտությունը դարձել է ծայրաստիճան ցավոտ խնդիր հայ հասարակության համար: Բռնությունն ու մարդկային կորուստները, բայց միևնույն ժամանակ նաև ռազմական հաղթանակը դարձան Խորհրդային Հանրապետությունից դեպի անկախ պետություն Հայաստանի անցման տարիների բնութագրիչը: Իրավիճակն արմատավորվեց հետագա

տասնամյակների ընթացքում՝ Ադրբեջանի հետ շփման գծում բռնության դրսևորումներով և ԵԱՀԿ Մինսկի խմբի միջնորդության շարունակական փորձերով:

Հաշվի առնելով հարցի քաղաքական և մշակութային զգայունությունը՝ հակամարտությունը պարբերաբար շահարկումների և ապատեղեկատվության առարկա է դարձել Հայաստանում, Լեռնային Ղարաբաղում, Ադրբեջանում և այլուր: Լեռնային Ղարաբաղի երկրորդ պատերազմը համակարգված ապատեղեկատվության և շահարկումների առարկա էր, քանի որ մարդիկ ամեն կերպ փորձում էին հասկանալ բռնության հանկարծակի բռնկումն ու տեղեկատվության աղբյուրների սահմանափակությունը: Այս բաժնի հիմնական նպատակն է վերլուծել երեք կեղծ պատմույթ, որոնք գրավել են հայ հասարակության ուշադրությունը պատերազմի ընթացքում և դրանից հետո:

## Լեռնային Ղարաբաղի երկրորդ պատերազմը և Արծրուն Հովհաննիսյանի ֆենոմենը

2020-ի պատերազմի ընթացքում փոխգնդապետ Արծրուն Հովհաննիսյանը դարձավ հայ հասարակության համար ամենատեսանելի ու վստահելի դեմքերից մեկը: Դեռևս պատերազմից առաջ հայտնի գործիչ Հովհաննիսյանն իր կարիերայի ընթացքում նշանակումներ ուներ նախագահի աշխատակազմում, Պաշտպանության նախարարությունում և ակադեմիական հաստատություններում: Նա դարձավ Պաշտպանության նախարարության հիմնական հանրային ներկայացուցիչն ինչպես Լեռնային Ղարաբաղում 2020-ի հուլիսին հակամարտության սրման փուլում, այնպես էլ պատերազմի ժամանակ: 2020 թ.-ի սեպտեմբերի վերջից սկսած՝ Հովհաննիսյանը պարբերաբար հանրային ճեպազրույցներ էր անցկացնում պատերազմի մասին Հայկական միասնական տեղեկատվական կենտրոնում, որը հիմնադրվել էր որպես Վարչապետի աշխատակազմում գործող պետական ոչ առևտրային կազմակերպություն՝ «արտակարգ իրավիճակներում հասարակությանը հուսալի և հրատապ տեղեկատվություն տրամադրելու համար»:[84]

Հայ հասարակությունը պատերազմի մասին ամենօրյա թարմացումներ էր ակնկալում Հովհաննիսյանից, ով շատ արագ դարձավ առաջնային և վստահելի աղբյուր. նրա զեկույցներն առավել կարևոր էին դարձել, քանի որ պատերազմի վտանգներն ու պատերազմական ռեպորտաժների սահմանափակումները խանգարում էին լրագրողներին հասնել առաջնագիծ: Պատերազմի առաջին իսկ օրերից Հովհաննիսյանը և այլ պաշտոնատար անձինք որդեգրեցին համախմբման կարգախոս և #հաղթելուենք հեշթեգը, և այն դարձավ պատերազմի մասին հանրային դիսկուրսի մեխը թե՛ սոցիալական ցանցերում, թե՛ ցանցից դուրս: Մոտ մեկ ամիս տևած պատերազմի ընթացքում հայ հասարակությունը մեծ վստահություն էր ցուցաբերում Պաշտպանության նախարարությանը, որը սովորաբար պնդում էր, որ հայկական և Լեռնային Ղարաբաղի զորքերը դիմադրում են, պահպանում են վերահսկողությունը շատ տարածքներում, պատրաստում հակահարձակում և իրականացնում «մարտավարական նահանջ»՝ մի արտահայտություն, որով Հովհաննիսյանը ժամանակին բացատրում էր տարածաշրջանի հարավային մասում որոշ տարածքների կորուստը:[85]

Հանրային վստահությունը սկսեց երերալ արդեն հոկտեմբերի վերջին, երբ ավելի շատ միջազգային լրատվական աղբյուրներ հայտնեցին Լեռնային Ղարաբաղի և հայկական ուժերի կողմից տարածքային խոշոր կորուստների մասին:[86] Հոկտեմբերի 24-ին Միասնական տեղեկատվական կենտրոնից ելույթ ունենալով՝ Հովհաննիսյանը ներկայացրեց մի ինտերակտիվ քարտեզ, որը ցույց էր տալիս ադրբեջանական ուժերի դիրքը պատերազմական գոտու հարավում գտնվող առանցքային տարածքներում:[87] Լուրը ցնցեց հայ հասարակությանը, բայց քանի որ այն համընկնում էր աճող ծավալներով միջազգային լուսաբանման հաղորդումների հետ, ներկայացումը ժամանակավորապես վերականգնեց հասարակության վստահությունը Միասնական տեղեկատվական կենտրոնի ճեպազրույցների նկատմամբ: Հասարակության վստահությունը պաշտոնական աղբյուրների նկատմամբ կարծես կայուն էր մինչև նոյեմբերի 10-ը, երբ վարչապետ Փաշինյանը հայտարարեց, որ ինքը, Պուտինը և Ալիևը հրադադարի մասին հայտարարություն

են ստորագրել՝ պատերազմը դադարեցնելու համար, որում նշվում էր, որ Հայաստանը համաձայնում է զորքերը դուրս բերել Լեռնային Ղարաբաղից, և Ադրբեջանը, ի թիվս այլ պայմանների, ձեռք է բերում նշանակալի տարածքի վերահսկողություն:[88] Լուրը ցնցեց հայերին և վերաճեց անկարգություններով և բռնություններով լի լարված գիշերվա:[89]

Հրադադարի մասին հայտարարությունից հետո, երբ պատերազմի ավելի ամբողջական պատկերն արդեն տեսանելի էր, հասարակությունը սկսեց կասկածել, որ պետական տեղեկատվական համակարգն իրենց մոլորության մեջ է գցել: Իրավիճակը հատկապես սարսափելի դարձավ, երբ պաշտոնյաները սկսեցին թարմացնել պատերազմի զոհերի թիվը, որը շատ ավելի աճեց, քան կանխատեսվում էր:[90] Այս հետևանքների ֆոնին Հովհաննիսյանը՝ պետության տեղեկատվական համակարգի հանրային դեմքը, հայտնվեց ծաղրուծանակի, անվստահության և ապատեղեկատվություն տարածելու մեղադրանքների թիրախում:[91] Սկզբում նա պնդում էր, որ անտեղյակ է առաջնագծում տեղի ունեցող զարգացումներից և քննադատողներին հիշեցրեց, որ ինքն արտահայտում է ՊՆ պաշտոնական դիրքորոշումը:[92] Նրա հռետորաբանությունը փոխվեց 2021-ի հունվարին «Sputnik Արմենիայի» հետ հարցազրույցում, որում նա ավելի բաց էր խոսում պատերազմի ընթացքում քարոզչության դերի մասին: Արդարացնելով քարոզչության անհրաժեշտությունը՝ նա նաև խոսեց հաղորդակցության հավասարակշռման դժվարությունների մասին. հանրությանն ուժեղ կողմեր էին ներկայացվում, բայց միևնույն ժամանակ պատերազմի դժվարությունների մասին թեմաների հարցում բոլորն էին զգայուն:[93]

Պատերազմից ամիսներ անց քարոզչության և ապատեղեկատվության միջև սահմանները դեռևս մշուշոտ են, մասամբ՝ կապված հետագա իրադարձությունների անորոշության հետ: Պատերազմից հետո մի քանի դեպքեր ենթադրում են, որ պետական պաշտոնյաները երբեմն մոլորության մեջ էին գցում հասարակությանը: Օրինակ, 2020 թվականի դեկտեմբերի 12-ին տեղական մեդիայում և սոցիալական ցանցերում լուրեր սկսեցին շրջանառվել այն մասին, որ ադրբեջանական ուժերը հրադադարի ռեժիմի խախտմամբ գրավել են ռազմավարական հարմար դիրքում տեղակայված երկու գյուղ՝ Հին Թաղեր և Խծաբերդ:[94] Մերձկառավարական և վարչապետ Փաշինյանի «Իմ քայլը» դաշինքի ներկայացուցիչներն անիջապես զեկույցը պիտակեցին որպես «կեղծ լուր» և մեղադրեցին այս տեղեկատվությունը տարածողներին «մեդիատեռոր» իրականացնելու մեջ:[95] Այնուամենայնիվ, լուրը հաստատվեց հաջորդ օրն իսկ:[96] Հանրությունը տագնապով տեղեկացավ, որ ադրբեջանական ուժերը ոչ միայն գրավել են գյուղերը, այլ նաև պատանդ են վերցրել տասնյակ հայ զինծառայողների:[97]

Պատերազմի ընթացքում պետության հաղորդակցման ռազմավարությունը հասկանալու համար կարևոր է տարբերակել տեղեկատվական պատերազմի և տեղեկատվական անվտանգության ներքին և միջազգային շերտերը: Պատերազմի ընթացքում Միասնական տեղեկատվական կենտրոնը և Հովհաննիսյանը մի հարթակից հայաստանյան պաշտոնական դիրքորոշումն էին ներկայացնում հանրությանը մի կողմից և միջազգային հանրությանը՝ մյուս կողմից: Այնուամենայնիվ, հայ հասարակության և պետության միջև վստահության և ուժի դինամիկան այս հարաբերությունները դարձնում էր բացառապես խոցելի, հատկապես այն պատճառով, որ պատերազմի ժամանակ լրատվամիջոցների լուսաբանման սահմանափակումները և Լեռնային Ղարաբաղում առկա վտանգավոր պայմանները սահմանափակում էին անկախ լրագրության հասանելիությունը: Այս առումով կարևոր հարց է այն, թե ինչու է ՀՀ կառավարությունը մոլորության մեջ գցել իր քաղաքացիներին:

Պաշտոնյաների մտադրությունը պարզելու հարցը պահանջում է ուժեղ, անկախ հետազոտություն, բայց մի քանի փաստարկներ արդեն ներառվել են հանրային դիսկուրսում: Նախ՝ կարծիքներ կան, որ կառավարությունը գաղտնի էր պահում աճող կորուստների և զոհերի մասին տեղեկատվությունը՝ սոցիալական ընդվզում և խուճապ չառաջացնելու համար: Երկրորդ՝ ոմանք ենթադրում են, որ ծանր իրավիճակի մասին հաղորդելը կարող էր հանգեցնել Հայաստանում պահպանողական ընդդիմադիր ուժերի կողմից անկարգությունների հրահրմանը կամ իշխանությունը խլելու փորձի: Երրորդ՝ կա ենթադրություն, որ իրավիճակի ավելի ճշմարտացի գնահատումը կարող էր բացասաբար ազդել մոբիլիզացիայի և կամավորության վրա:

Ինչն էլ լինի պատճառը, անհրաժեշտ է, որ պետությունը վերանայի և բացատրի իր վարքագիծը: Դա անելը ոչ միայն կցրի հասարակության շփոթմունքը պատերազմի ընթացքում տեղի ունեցածի շուրջ, այլև կվերականգնի պետական հաղորդակցության գործառույթների ամբողջականությունն ու վստահելիությունը: Պատերազմի ընթացքում և դրանից հետո պաշտոնատար անձանց պահվածքը մեծապես ազդել է Հայաստանի պետական ինստիտուտների նկատմամբ հասարակության վստահության վրա: Այս կոտրված վստահությունը նպաստել է շահարկումներին՝ միևնույն ժամանակ հայերին թողնելով հատկապես խոցելի ինչպես տեղական, այնպես էլ միջազգային դերակատարների կողմից թիրախավորված կեղծ տեղեկատվության դեմ: Քանի որ Լեռնային Ղարաբաղի ապագան մնում է և՛ հիմնական քաղաքական հարց, և՛ շատ զգայուն մշակութային խնդիր, հայկական պետության և նրա քաղաքացիների միջև արդյունավետ հաղորդակցման ուղիներ ստեղծելն ապագայում կարևոր նշանակություն կունենա ազգային անվտանգության համար: Ավելին՝ մինչ հայերը ձևավորում են իրենց երկրի ապագան առաջիկա տարիներին, Լեռնային Ղարաբաղի երկրորդ պատերազմի վերաբերյալ տեղեկատվության մանիպուլյացիան կլինի հզոր քաղաքական գործիք՝ սոցիալական պառակտում և խառնաշփոթ առաջացնելու:

## Կանխամտածված պարտության և «վաճառված հողերի» պատմություններ

2021 թ. մարտի 4-ին նախկին նախագահ Ռոբերտ Քոչարյանը մամուլի ասուլիս հրավիրեց ռուսական լրատվամիջոցների ներկայացուցիչների համար և պնդեց, որ պատերազմի չորրորդ օրը Գլխավոր շտաբը տեղեկացրել է վարչապետ Փաշինյանին, որ Հայաստանը պարտվելու է պատերազմում: Նա ավելացրեց, որ «սա շատ նման է նախապես ծրագրված պարտության: Դրդապատճառը պետք է հետաքննվի համապատասխան մարմինների կողմից»:[98] Քոչարյանն այս հայտարարությունն արեց պատերազմի ավարտից գրեթե չորս ամիս անց, բայց նա կրկնում էր արդեն հայտնի պատմույթը:

Համալիր պնդումը, որ Հայաստանի պարտությունն ինչ-որ կերպ կանխորոշված էր, պահանջում է հետագա ուսումնասիրություն և բացահայտում պետական մարմինների կողմից: Չնայած այս պատմույթին աջակցող շատ քիչ ապացույցներ կան՝ հայ հասարակության շրջանում այն արդեն դարձել է գուշակությունների և խեղաթյուրման առարկա: Ավելին՝ անհիմն պնդումներով ներկայիս կառավարության դեմ տեղեկատվական արշավներին աջակցելու համար պահպանողական ընդդիմադիր ուժերն ընդլայնել են այս պատմույթը մի շարք առնչվող, բայց չապացուցված պնդումներով: Քննարկվող ընդդիմադիր ուժերը՝ մասնավորապես, 17+ Հայրենիքի փրկության շարժումը, օգտագործել են կանխամտածված պարտության պատմույթը՝ որպես գործող իշխանության հրաժարականը պահանջելու առիթ:[99] Այս պատմույթի շահարկումը կարող է հետագայում ծանր հետևանքներ ունենալ Հայաստանի ուժային կառույցների և քաղաքացի-պետություն հարաբերությունների վրա:

Այս պատմույթը սկիզբ է առել դեռ Լեռնային Ղարաբաղի երկրորդ պատերազմից առաջ և 2018-ի Թավշյա հեղափոխությունից հետո, երբ համաժողովրդական շարժումը Իմ քայլը դաշինքն ու Փաշինյանին բերեց խորհրդարանական իշխանության: Օրինակ՝ 2018-ի դեկտեմբերին Ազգային ժողովի նախկին պատգամավոր, արտախորհրդարանական «Երկիր Ծիրանի» կուսակցության ղեկավար Զարուհի Փոստանջյանը տեղական լրատվամիջոցներին հայտնեց, որ Փաշինյանը սկսել է գործընթացներ՝ Լեռնային Ղարաբաղի մասերը Ադրբեջանին հանձնելու համար: Փոստանջյանը նրան դավաճան անվանեց, բայց որևէ ապացույց չբերեց պնդումը հաստատելու համար:[100] Խոշոր քաղաքական կուսակցություններն ու լրատվամիջոցները 2019-ին այս անհիմն դիսկուրսը հզորացրին, և այն շարունակեց մնալ շահարկման թեմա:[101]

Պատերազմի ընթացքում այս պատմույթը նոր թափ ստացավ և հանդես եկավ նոր անկյունից: Տեղական լրատվամիջոցները հաղորդում էին, իբր Հայաստանի իշխանությունները ադրբեջանական պետությանն են «վաճառել» Լեռնային Ղարաբաղի հողերը:[102] Այս ասեկոսեների ծագումը մնում է անհասկանալի, բայց նոյեմբերին հրադադարի մասին հայտարարությունից հետո այս պնդումը վերածվեց

ապատեղեկատվության լիարժեք պատմույթի: Կանխամտածված պարտության մասին այս ավելի լայն շարադրանքը սկսեց կլանել Հադրութ և Շուշի քաղաքներում հայկական զորքերի պարտության վերաբերյալ անորոշությունը, ինչպես նաև «Իսկանդեր» շարժական կարճ հեռահարության բալիստիկ հրթիռային համակարգի օգտագործման և Լեռնային Ղարաբաղի, Հայաստանի և Ադրբեջանի կառավարությունների միջև հարաբերությունների մասին ասեկոսեները:

Հրադադարի մասին հայտարարությունից հետո հասարակությունը բուռն քննարկումների մեջ մտավ Շուշիից հայկական զորքերի դուրսբերման շուրջ: Տեղական լրատվամիջոցներից շատ աղբյուրներ հայտնեցին, որ հայկական ուժերը վերահսկել են Շուշին մինչև նոյեմբերի 10-ի հրադադարը: Նոյեմբերի 8-ին Ալիևը հայտարարել էր, որ ադրբեջանական բանակը գրավել է Շուշին և շնորհավորանքներ ստացել Թուրքիայի նախագահ Էրդողանից:[103] Սակայն, Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի իշխանությունները պնդում էին, որ իրենք վերահսկում են Շուշին մինչև հրադադարի մասին հայտարարությունը:[104] 2021 թ. փետրվարին կայացած հարցազրույցում ՀՀ նախկին նախագահ Սերժ Սարգսյանը հայտարարեց, որ Շուշին «հանձնել են», և որ քաղաքի պաշտպանության մասին տեղեկությունները մնում են անհասկանալի, չնայած ավելացրեց, որ քաղաքը, միգուցե և ոչ միտումնավոր է հանձնվել:[105]

Այս պատմույթի մի մաս դարձավ նաև ռուսական արտադրության «Իսկանդեր» շարժական կարճ հեռահարության բալիստիկ հրթիռային համակարգի կիրառման վերաբերյալ անորոշությունը: Իսկանդերը Հայաստանի զինանոցի ամենահզոր զենքերից մեկն է, և հասարակությունն ապշած էր, որ հայկական ուժերը համակարգը չեն կիրառել Ադրբեջանի առանցքային պաշտպանական ենթակառուցվածքների դեմ: Պաշտոնական տեղեկատվության պակասի ֆոնին սկսեց շրջանառվել պատմույթների մի նոր խումբ: Ոմանք ենթադրում էին, որ «Իսկանդերի» չկիրառումը կանխամտածված պարտության վկայությունն է:[106] Մյուսները պնդում էին, որ հայկական ուժերը Իսկանդերը կիրառել են Շուշիի ուղղությամբ այն բանից հետո, երբ Ադրբեջանը գրավել է քաղաքը:[107] Բանավեճը նոր թափ ստացավ, երբ Փաշինյանը պնդեց, որ «Իսկանդերն» օգտագործվել է, բայց հրթիռները կամ չեն պայթել, կամ անսարք են եղել:[108] Ռուսաստանի պաշտոնյաները հերքեցին նրա հայտարարությունը, իսկ ավելի ուշ Փաշինյանի գրասենյակը պնդեց, որ վարչապետին սխալ են զեկուցել Գլխավոր շտաբից:[109] Շփոթության մեջ լուրեր սկսեցին շրջանառվել այն մասին, որ Ռուսաստանի կառավարությունը, որն այժմ տարածաշրջանի առաջատար ուժային միջնորդն է, հայկական ուժերին թույլ չի տվել օգտագործել համակարգը: Հանրությունը շարունակեց հարցականի տակ պահել Հայաստանի պետական կառույցների գործողությունները պատերազմի ընթացքում:[110]

Պատերազմից ամիսներ անց հայերի համար շարունակում է անորոշ մնալ՝ արդյո՞ք և ինչպե՞ս են «Իսկանդեր» հրթիռներն օգտագործվել, ինչը տարածություն է ստեղծել հետճշմարտության քաղաքականության համար, որտեղ հուզական կամ գաղափարական կոչերը գերակա են ազդեցություն ունեցող և հեղինակություն վայելող փաստերի նկատմամբ: Միտումնավոր պարտության և «վաճառված հողերի» պատմույթները նույնպես տեղեկատվական մշուշի մեջ են: Այս պատմույթներն աճել են՝ կեղծ կամ շահարկված տեղեկատվության նոր շղթաներ կլանելով, ինչպես կեղծ տեղեկությունը, թե Լեռնային Ղարաբաղի նախագահ Արայիկ Հարությունյանը վաճառել է իր ունեցվածքը՝ նախապատրաստվելով պատերազմին:[111] Այս պատմույթների խմբի մեկ այլ հիմնավորումն այն է, որ Հայաստանի իշխանությունները միտումնավոր են զիջել Շուշին և Հադրութը՝ ի նպաստ Թուրքիայի հետ Հայաստանի սահմանի բացմանը և առերևույթ տնտեսական զարգացմանը՝ ազգային անվտանգության հաշվին:[112]

Այս պատմույթները տարածում էին քաղաքական պառակտման երկու կողմերում՝ ծավալվելով ինչպես ներկայիս կառավարության, այնպես էլ նախկին իշխող կուսակցության՝ Հանրապետական կուսակցության (ՀՀԿ) շուրջ: 2020-ի դեկտեմբերին արտահոսեց Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոյի և Հայաստանի գործող նախագահ Սերժ Սարգսյանի 2016 թ. խոսակցության ձայնագրությունը: Ձայնագրության մեջ Լուկաշենկոն Սարգսյանին հայտնում է, որ Ալիևը պատրաստ կլինի վճարել 5 միլիարդ ԱՄՆ դոլար՝ ԼՂ հարակից տարածքներից հայկական ուժերի դուրսբերման դիմաց, որոնք Հայաստանը պահում էր որպես բուֆերային գոտի 1994-ի զինադադարից ի վեր: Սարգսյանի պատասխանը հետևյալն է. ինքը պատրաստ կլինի 6 միլիարդ դոլար վճարել, եթե Ալիևը հրաժարվի այդ տարածքների նկատմամբ

իր պահանջներից:[113] Ո՛չ Լուկաշենկոն, ո՛չ Սարգսյանը չհերքեցին ձայնագրության իսկությունը, ինչը հզոր ազդեցություն ունեցավ Հայաստանում հանրային դիսկուրսի վրա: Նախ՝ ձայնագրությունը վավերացրեց այն, որ վիճելի հողերը իրականում հնարավոր է գնել և վաճառել: Երկրորդ՝ դա դրականորեն անդրադարձավ նախկին ռեժիմի վրա, քանի որ Սարգսյանը մերժել էր Ալիևի ենթադրյալ առաջարկը: Վերջապես, ձայնագրությունը հասարակությանը մղեց ենթադրություններ անել, որ «Իմ քայլը» կառավարությունը, հնարավոր է, ընդունել է նման առաջարկ,[114] և լուրեր տարածվեցին, որ նախկին իշխանություններն ի վերջո ընդունել են գործարքը, իսկ Փաշինյանը ժառանգել է հետևանքները:[115] Հայերի մի խումբ աջակցում էր այս պատմույթներին, այդ թվում՝ անհատ քաղաքացիներ, զինվորների ընտանիքներ, վետերաններ, հասարակական գործիչներ և փորձագետներ: Սոցիալական ցանցերում գրառումները և առցանց լրատվամիջոցները վերապատմում էին այն և նպաստում դրա տարածմանը:

Լեռնային Ղարաբաղը շարունակում է մնալ խիստ զգայուն խնդիր հայ հասարակության համար և ազգային քաղաքականության կենտրոնական հարց: Դերակատարները կարող են մանիպուլյացնել Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ դիրքորոշումները՝ քաղաքական գործիչներին վավերացնելու, աջակցելու կամ վարկաբեկելու համար, և այս պատմույթները ցույց են տալիս, որ այս գործընթացն արդեն իսկ ընթացքի մեջ է: Հասարակական խառնաշփոթը վերացնելու, կեղծ պատմույթները ցրելու և հայ հասարակությանը պատերազմի մասին հստակ պատասխաններ տալու պետական ուժեղ ջանքերի բացակայության պայմաններում տեղեկատվական դաշտի քաոսը հայերին, ինչպես Հայաստանում, այնպես էլ Սփյուռքում, խոցելի է դարձնում ապատեղեկատվական մանիպուլյացիայի հանդեպ:

## Առասպելներ արտաքին խաղացողների դերի մասին

2020 թ. սեպտեմբերի 29-ին, Ադրբեջանի նախագահ Ալիևը «Ռուսաստան-1» ռուսական հեռուստաալիքին տված հարցազրույցում պնդեց, որ Փաշինյանի վրա մեծ ազդեցություն ունի ԲՀՀ հիմնադիր Ջորջ Սորոսը և Հայաստանում ենթադրյալ «Սորոսի ռեժիմը» կապեց Թավշյա հեղափոխության հետ:[116] 2020-ի հոկտեմբերի 15-ին, Փաշինյանն ու Ալիևը զուգահեռ հարցազրույցների մասնակցեցին Կրեմլի հետ սերտ կապեր ունեցող Ռուսաստանի լրատվական վիճահարույց գործիչ Դմիտրի Կիսելյովի հետ: Հարցազրույցում Ալիևը Փաշինյանին անվանեց «Սորոսի արտադրանք» և ԽՍՀՄ կազմալուծումը կապեց Լեռնային Ղարաբաղի իրադարձությունների հետ:[117] Երկու օր անց Ալիևը թուրքական «Հաբեր» լրատվամիջոցի հետ զրույցում կրկին խոսեց Սորոսի հետ Փաշինյանի ենթադրյալ կապերի մասին: Այս անգամ նա նաև հստակ պնդեց, որ Փաշինյանը հակառուսական քաղաքական գործիչ է:[118]

Այս հայտարարությունների միջոցով Ալիևը մուտք գործեց Սորոսի մասին առասպելների աշխարհ, որոնք տարածված և հզոր են տարածաշրջանում, ինչպես և ռուս-հայկական հարաբերությունների զգայուն թեման: Ալիևը կիրառեց ապատեղեկատվական այն պատմույթը, որին տարիներ շարունակ աջակցում էին պետության կողմից վերահսկվող ռուսական լրատվամիջոցները:[119] Ռուսաստանում ԲՀՀ-ի գործունեությունն արգելված է 2015 թվականից՝ պետական անվտանգությանը սպառնալու հիմնավորմամբ:[120] Ռուսաստանի կառավարության կողմից հովանավորվող լրատվամիջոցները պնդում են, որ Սորոսը ակտիվորեն ներգրավվում է տարբեր երկրներում քաղաքականության մշակման գործընթացում և աջակցում ռեժիմի փոփոխությանը: Օրինակ, ՌԻԱ Նովոստին ներկայացրել է մի շարք չհիմնավորված փաստեր Նարնջագույն հեղափոխության (2004) և Ուկրաինայում Արժանապատվության հեղափոխության (2013–2014) մեջ Սորոսի դերի մասին:[121] Ռուսաստանում սրա արդյունքում գունավոր հեղափոխությունների հեռանկարի նկատմամբ բարձր զգայունություն է ձևավորվել. այս զգայունությունն ազդել է Հայաստանի Թավշյա հեղափոխության և ռուս-հայկական հարաբերությունների վրա դրա ազդեցության մասին տարածաշրջանային դիսկուրսի վրա:

Ռուսաստանը Հայաստանի հիմնական տարածաշրջանային գործընկերն է և անվտանգության կարևորագույն աջակցության աղբյուր է հանդիսանում: Հայաստանի ղեկավարությունը բնութագրելով որպես հակառուսական կամ Սորոսի ազդեցության տակ գտնվող՝ Ալիևը, միգուցե, մտադրվել էր սրել

տարածաշրջանային հարաբերությունները, բայց նաև այդպիսով անցում կատարեց Հայաստանում արդեն եղած մեծ ներքին բանավեճի: Թավշյա հեղափոխության առաջին օրերից Սորոսի մասին խոսակցությունը, օտարերկրյա դոնորների ազդեցությունը և ռուս-հայկական հարաբերությունները ազգային քաղաքականության հզոր զենքն էին: Օրինակ՝ 2019-ին Ազգային անվտանգության ծառայության (ԱԱԾ) նախկին ղեկավար Դավիթ Շահնազարյանը պնդում էր, որ ԲՀՀ-ի կողմից աջակցվող կազմակերպություններ աշխատում են Լեռնային Ղարաբաղում, և որ «Իմ քայլը» կառավարության նպատակն է «թուլացնել բանակն ու Ղարաբաղը՝ «արտահանելով» հողափոխությունը դեպի ԼՂ»:[122] Մի շարք պետական պաշտոնյաներ կրկնել են այս պատմույթները հարցազրույցներում և հրապարակային ելույթներում, և սրանք ավելի մեծ լսարան են ձեռք բերել տեղական լրատվամիջոցների և սոցիալական գրառումների վերահրապարակման միջոցով:[123]

Հասարակական գիտակցության մեջ այս պատմույթների կուտակումն արդեն իսկ ունեցել է վտանգավոր հետևանքներ: Հրադադարի մասին հայտարարությունից հետո՝ նոյեմբերի 10-ին, հարձակման ենթարկվեցին ԲՀՀ-Հայաստանի և «Ազատ Եվրոպա/Ազատություն» ռադիոկայանի տեղական գրասենյակները:[124] Պատերազմից հետո իշխանության գալ ձգտող քաղաքական խմբերը շարունակում են օգտագործել սուտ տեղեկություններ ԲՀՀ-ի, օտարերկրյա դոնորների և նրանց ենթադրյալ քաղաքական նպատակների մասին:[125] 2021-ի հունվարին ՀՀԿ խոսնակ Էդուարդ Շարմազանովը պնդեց, որ «Սորոսի «հինգերորդ շարասյունն» ակտիվորեն միացել է հակառուսական քարոզչական արշավին»: 2021 թվականի մարտին նախկին նախագահ Քոչարյանը Սորոսին մեղադրեց Հայաստանում քաղաքականություն մշակելու գործընթացների վրա ազդելու և երկրի ազգային շահերին հակադրվելու մեջ:[126]

Իմ քայլն ու Փաշինյանին Սորոսի դավադրության տեսությունների ցանցին միացնել փորձող դերակատարները հավանաբար ունեն երկու նպատակ: Առաջինը սոցիալ-քաղաքական նպատակն է, քանի որ շատ պատմույթներ ենթադրում են, որ գոյություն ունի ԲՀՀ հստակ օրակարգ, որը հարում է հայ հասարակության համար անընդունելի արժեքների: Երկրորդ նպատակը, որն արմատավորված է հայ-ռուսական հարաբերություններում, թիրախավորում է ԼՂ հակամարտության աշխարհաքաղաքական փխրունությունը: Այն ուղղակիորեն իրար է կապում ԼՂ երկրորդ պատերազմում Հայաստանի պարտությունը ներկայիս կառավարության ունեցած ենթադրյալ «սորոսակողմ» լինելը և այս պատմույթում հակառուսական դիրքորոշումը, և ենթադրում, որ այս դիրքորոշման գինը եղել է Ռուսական կառավարության լիակատար աջակցությունը: Այսպիսով, այս պատմույթներն ունեն ինչպես ներքին, այնպես էլ արտաքին կողմեր, և երկուսն էլ տարակուսանք և տարաձայնություններ են առաջացրել հայ հասարակության շրջանում:

## Եզրակացություններ

ԼՂ երկրորդ պատերազմից հետո ապատեղեկատվությունն ու հետճշմարտության քաղաքականությունը զուգահեռ են ընթացել և նպաստել մի միջավայրի, որտեղ փաստերը կորցնում են իրենց ուժը հուզական կամ հավատքների վրա հիմնված կոչերի դեմ: Վստահելի տեղեկատվության սակավությունը, ինչպես նաև հայերի համար ԼՂ հակամարտության անհավատալիորեն զգայուն և գոյաբանական բնույթը ապատեղեկատվության համար արտակարգ հիմքեր են դրել:

Պատերազմի մասին տեղեկատվության շահարկումը հզոր զենք է դարձել ազգային քաղաքականության մեջ, և ներկայիս կառավարական, ազգային քաղաքական էլիտայից և պահպանողական ընդդիմությունից անհատներ պայքարել են գերիշխող պատմույթը վերահսկելու համար: Հայ հասարակությունը կրել է այս գործընթացի հիմնական բեռը, քանի որ դեռ հավաստի տեղեկատվության սակավության պայմաններում ջանում է հասկանալ պատերազմը, դրա հետագա փուլերը և երկրի ապագայի վրա դրա հետևանքները:

Վերջերս անցկացված հարցումների արդյունքները վկայում են պետական կառույցների նկատմամբ վերաբերմունքի անկման մասին՝ չնայած Փաշինյանը պահպանել է հասարակության զգալի մասի աջակցությունը: Ըստ 2021 թվականի փետրվարին Gallup International-ի հարցման արդյունքների՝ հարցվածների 38,8 տոկոսն ասել է, որ Փաշինյանը պետք է մնա իր պաշտոնում, մինչդեռ 43,6 տոկոսն ասել

է, որ պետք է հեռանա:[127] Gallup-ի՝ 2020 թվականի հուլիսի հարցման տվյալների համաձայն՝ հարցվածների 85 տոկոսը հավանություն էր տվել Փաշինյանի գործունեությանը:[128] 2021 թ. մարտին Միջազգային հանրապետական ինստիտուտը (IRI) հրապարակեց իր հարցումների արդյունքները. հարցվածների 54 տոկոսը հավանություն է տվել Վարչապետի աշխատակազմին (29 տոկոսը պատասխանել է «շատ նախընտրելի», իսկ 26 տոկոսը ՝ «որոշակիորեն նախընտրելի»), մինչդեռ 2019 թվականին հարցման արդյունքը 72 տոկոս էր:[129] Նախընտրելիության վարկանիշի համաձայն՝ Վարչապետի աշխատակազմը հետ է մնում բանակից (50 տոկոսը գնահատել է «շատ նախընտրելի») և Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակից (30 տոկոսը գնահատել է «շատ նախընտրելի»):[130]

Մինչ հայերը շարունակում են հաղթահարել պատերազմի հետևանքները, դիմանալ անկայուն սահմանային իրավիճակին և պատրաստվել հաջորդ ընտրություններին, երկրի սոցիալական վիճակն անկայուն է և խոցելի: Պատերազմի շուրջ տեղեկատվական քաոսի կարգավորումը կարևոր քայլ է պետության և քաղաքացու հարաբերություններում վստահության, թափանցիկության և ամբողջականության վերականգնման ուղղությամբ: Սա հատկապես կարևոր է հաշվի առնելով ոչ միայն պատերազմից, այլև համաշխարհային համավարակից երկրի վերականգնման բարդությունները, տնտեսական հետևանքները և ազգային անվտանգության փխրունությունը: Ապատեղեկատվության դեմ կայունության ձևավորումը կարևոր նշանակություն կունենա երկրի վերականգնման և ապագայի ընդհանուր տեսլականի համար:

# Ժողովրդավարություն և քաղաքացիական հասարակություն

Աննա Փամբուխչյան

Զեկույցի այս բաժինը նպատակ ունի վերլուծել 2018 թվականից ի վեր շրջանառվող Հայաստանի քաղհասարակության վերաբերյալ հիմնական ապատեղեկատվական պատմույթները և դրանց ազդեցությունը Հայաստանում ժողովրդավարության վրա: Չնայած վերլուծությունը պարունակում է որոշակի հղումներ հին կեղծ տեղեկատվական պատմույթներին՝ այն հիմնականում կենտրոնացած է քաղաքացիական հասարակությանը 2018-ի մայիսից ի վեր թիրախավորած ապատեղեկատվության վրա: Մասնավորապես, զեկույցը կենտրոնանում է երկու հիմնական պատմույթների վրա, որոնք նպատակ ունեն քաղաքացիական հասարակության գրանցված կազմակերպությունները ներկայացնել որպես օտարերկրյա դերակատարների կողմից ֆինանսավորվող կամ աջակցություն ստացող: Առաջինը նպատակ ունի վնաս հասցնել քաղաքացիական հասարակության նկատմամբ հասարակության ընկալմանը՝ ներկայացնելով այն որպես «արևմտյան գործակալ»՝ կեղծիքներ գեներացնելով հայ-ռուսական հարաբերությունների նկատմամբ քաղաքացիական կազմակերպությունների վերաբերմունքի վերաբերյալ՝ տարածելով հայկական պետության ներսում ենթադրյալ քողարկված գործողությունների պատմույթներ: Երկրորդ պատմույթը պնդում է, որ քաղաքացիական ակտիվությունը թուլացնում է Հայաստանը, և մասնավորապես, որ քաղաքացիական որոշակի վարքագիծը կապված է եղել Լեռնային Ղարաբաղի երկրորդ պատերազմի և Հայաստանի ռազմական պարտության հետ:

## Մեթոդական նշումներ

Այս բաժնում կիրառվում են որակական վերլուծության մեթոդներ՝ ուսումնասիրելու Հայաստանում քաղաքացիական հասարակության և ժողովրդավարության դեմ տարածված ապատեղեկատվական պատմույթները՝ օգտագործելով բովանդակություն՝ տարածված Facebook-ում և հայտնի առցանց լրատվամիջոցներում: Facebook-ը նշանակալի դեր ունի Հայաստանում՝ որպես հանրային քննարկման հարթակ. այն դարձավ լուրերի և քաղաքական հաղորդագրությունների տարածման հիմնական հարթակ Թավշյա հեղափոխության ընթացքում և դրան հաջորդող շրջանում:[131] Վերլուծությունը օգտագործում է հայտնի հանրային գործիչների հայտարարությունները և ուսումնասիրում բովանդակություն մի շարք լրատվամիջոցներից, որոնք լայնորեն ընկալվում են որպես հակաքաղաքացիական հասարակության և հակաժողովրդավարության արշավների առաջնորդներ: Հեղինակը լրատվամիջոցների ընտրությունը

կատարել է՝ հիմնվելով փաստեր ստուգող կազմակերպությունների և մեդիա մասնագետների հետ զրույցների վրա: Բացի այդ, բաժնում օգտագործվում են զեկույցներ և հոդվածներ, որոնք հրապարակվել են քաղաքացիական հասարակության անկախ կազմակերպությունների (ՔՀԿ) և փաստեր ստուգողների կողմից:

Այս բաժնում օգտագործվում է «քաղաքացիական հասարակություն» տերմինը՝ պաշտոնապես գրանցված հասարակական կազմակերպությունների (ՀԿ), անկախ լրատվամիջոցների, գրանցված և չգրանցված քաղաքացիական նախաձեռնությունների և քաղաքացիական ակտիվիստների բնութագրելու համար: Հայաստանի պարագայում անկախ լրատվամիջոցներն ու քաղաքացիական հասարակությունը հաճախ խառը դերերով միահյուսված հասկացություններ են: ՔՀԿ-ների մի լայն զանգված կատարում է մեդիայի գործառույթներ, և հակառակը: Այս կազմակերպությունները, ներառյալ լրատվամիջոցները, հաճախ (եթե ոչ բացառապես) կախված են արտասահմանյան ֆինանսավորումից՝ լրատվամիջոցների գովազդի փոքր շուկայի և ՔՀԿ-ների համար կառավարության թափանցիկ ֆինանսավորման բացակայության պատճառով:[132] Քաղաքացիական հասարակության անդամները հաճախ հանդես են գալիս որպես քաղաքացիական ակտիվիստներ կամ գրանցված և չգրանցված քաղաքացիական նախաձեռնությունների անդամներ:

## Քաղաքացիական հասարակության դերը Հայաստանում

Հայաստանի քաղաքացիական հասարակությունն ու անկախ լրատվամիջոցները զգալի դեր են խաղացել երկրում ժողովրդավարացման և ժողովրդավարական արժեքների ամրապնդման գործում՝ դեռևս մինչև 2018 Թավշյա հեղափոխությունը: Լինելով թույլ ընդդիմադիր կուսակցությունների և քաղաքացիական ցածր կրթություն ունեցող պետություն՝ Հայաստանում գրեթե չկան քաղաքական ինստիտուտներ և դինամիկա, որն անհրաժեշտ է հակակշիռների և զսպումների աշխատող համակարգի համար: Ավելին՝ 2018-ի Թավշյա հեղափոխությունից առաջ շատ ընդդիմադիր կուսակցություններ, այդ թվում՝ Ազգային ժողովում նշանակալի ներկայություն ունեցողները, կամ գտնվում էին վերահսկողության տակ, կամ ուժեղ դաշինքի մեջ էին Հանրապետական կուսակցության (ՀՀԿ) հետ, որը երկու տասնամյակ գերիշխում էր Ազգային ժողովում: Արդյունքում, խորհրդարանական ընդդիմադիր կուսակցությունները նախկին իշխող կուսակցության ներկայացրած օրենսդրական նախաձեռնությունների օգտին միաձայն քվեարկելու պատմություն էին ձևավորել: Ավելին՝ ընդդիմադիր կուսակցությունները հազվադեպ էին տարբերակում իրենց արժեհամակարգերն ու գաղափարախոսությունները իշխող կուսակցության համակարգից, ինչը հանգեցնում էր Հայաստանում քաղաքական քննարկումների վակուումին:

Ուժեղ ժողովրդավարական ինստիտուտների և իրական ընդդիմադիր կուսակցությունների բացակայության պայմաններում քաղաքացիական հասարակությունը ստանձնել է բազմաթիվ կարևոր դերեր՝ ապահովել կառավարության վերահսկողություն, որոշակի օրենսդրական նախաձեռնությունների դեմ հանդես եկել ընդդիմադիր դիրքից, և ժողովրդավարական արժեքների և գաղափարների հիման վրա հանրային քննարկումներ կազմակերպել և խթանել դրանք: Արդյունքում, քաղաքացիական հասարակությունը կարողանում էր արդյունավետորեն հաշվետու դարձնել պետությանը: Քաղհասարակությունն է կազմակերպել քաղաքացիների ընդվզումը կառավարության հակասական նախաձեռնությունների դեմ. երկու վառ օրինակ են 2012 թ. Մաշտոցի պուրակի բողոքի ցույցերն՝ ընդդեմ հանրային տարածքի անընդունելի օգտագործման, և 2015 թ. «Էլեկտրիկ Երևան» անունը ստացած բողոքի ցույցերը՝ էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացման դեմ: 2018 Թավշյա հեղափոխության ընթացքում քաղաքացիական հասարակությունը ևս մեկ անգամ յուրահատուկ կազմակերպչական դեր խաղաց. ակտիվիստներն օգտագործեցին նախորդ բողոքի ցույցերի ընթացքում քաղած դասերը, ինչպես նաև քաղաքացիական նախաձեռնությունների առաջատար փորձը:[133] Ազգային մասշտաբի փոփոխություն մտցնելու այս ակտիվ դերը՝ փոփոխություն, որն արմատախիլ արեց Հայաստանում քաղաքական շահերը, 2018-ի մայիսից հետո ապատեղեկատվության և ատելության խոսքի ալիք առաջացրեց քաղհասարակության դեմ: Թիրախում էին քաղաքացիական հասարակության և հանրային դիսկուրսի

մեջ գտնվող մարգինալացված կազմակերպությունների և ակտիվիստների նկատմամբ հանրային վստահությունն ազգային կարևորության այնպիսի հարցերի շուրջ, ինչպիսիք են Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը և ազգային անվտանգությունը:

## Ապատեղեկատվությունը քաղաքացիական հասարակության դեմ Հայաստանում

Հայաստանում ժողովրդավարական արժեքների և քաղաքացիական հասարակության մասին ապատեղեկատվություն գոյություն է ունեցել մինչև 2018-ի քաղաքական փոփոխությունը: Այնուամենայնիվ, այն նախկինում ուներ պարբերական բնույթ, ակտիվանում էր որոշակի համատեքստերում և ի պատասխան քաղաքացիական հասարակության կազմակերպությունների նախաձեռնած օրենսդրական առաջարկների կամ տեղեկատվական արշավների: Այս գործոնների ազդեցությամբ շատ հաճախ մարդու իրավունքների պաշտպանության արշավներ, ինչպիսիք են ընտանեկան բռնության օրենսդրական կարգավորման կամ կանանց և ԼԳԲՏ+ անձանց իրավունքների պաշտպանության համար հայտարարություններն ու արշավները, ապատեղեկատվության գործակալների կողմից ներկայացվում էին որպես Հայաստանի ազգային կամ ընտանեկան արժեքներին հակասող:

Թավշյա հեղափոխությունն ընդլայնեց կեղծ պատմույթների բնույթը Հայաստանում: Մի կողմից՝ մարդու իրավունքների համատեքստում ապատեղեկատվությունն ավելի շատ աջակցություն ստացավ, այդ թվում՝ պետական պաշտոնյաների կողմից Ստամբուլյան և Լանզարոտեի կոնվենցիաների քննարկումների ժամանակ [Տես սոցիալական և մշակութային խնդիրներ բաժինը]: Միևնույն ժամանակ, երբեմնի հազվադեպ արծարծվող պատմույթները, որոնք թիրախավորում էին քաղաքացիական հասարակությանն ու ժողովրդավարությանը, աճեցին և՛ մասշտաբով, և՛ հաճախականությամբ: Եթե նախկինում մի քանի հանրային դերակատար կամ քաղաքական գործիչ քաղհասարակությունն անվանվում էր օտարերկրյա գործակալ կամ համարում ազգային անվտանգության սպառնալիք, ապա 2018-ից հետո այս պատմույթները դարձան մշտապես արծարծվող արդիական թեմա, որ հաճախ քննարկվում է ավելի լայն հասարակության կողմից:

«Սորոսի գործակալների» թեման, որն արդեն նախկինում նկատվել է Արևելյան Եվրոպայի և Հարավային Կովկասի երկրներում, այդ թվում՝ Հունգարիայում, Չեխիայում, Ուկրաինայում և Վրաստանում, դարձել է կեղծ պատմույթների ընդհանուր տարբերակիչը: 2018-ի զանգվածային ցույցերից հետո քաղաքացիական հասարակության մասին դավադրության տեսությունները հեղեղեցին հայկական տեղեկատվական դաշտը և ՔՀԿ-ներին բնորոշեցին որպես արևմտյան տերությունների գործակալներ, մասնավորապես՝ միլիարդատեր ներդրող և բարերար Ջորջ Սորոսի: Դավադրության այս տեսությունները համընկնում էին ավելի ընդգրկուն միֆերի և ապատեղեկատվական արշավների հետ, որոնք Սորոսին պատկերում են որպես տարածաշրջանում հեղափոխությունների ետևում կանգնած ուժ. համաձայն պատմույթի՝ նա նույնիսկ փորձել է հեղափոխություն կազմակերպել Միացյալ Նահանգներում:[134] Միևնույն ժամանակ, այս կեղծիքներն ունեն յուրահատուկ տեղական բնութագրիչներ: Լեռնային Ղարաբաղի հակամարտության վերջին սրման ֆոնին, 2020 թվականի մարտ ամսին Սորոսի կողմից գրված հոդվածը, որում նա եվրոպական երկրներին կոչ է անում աջակցել Թուրքիային Սիրիայում Ռուսաստանի գործողությունների դեմ, լայնորեն տարածվեց Հայաստանում՝ որպես նրա՝ թուրքամետ և ադրբեջանամետ դիրքորոշման ապացույց:[135] Միևնույն ժամանակ, Ալիևի ռեժիմի վերաբերյալ Սորոսի քննադատական խոսքերը հիմնականում անտեսվել են:[136]

«Արտասահմանյան գործակալների» պատմույթների խումբը միավորում է քաղաքացիական հասարակության մասին ապատեղեկատվական արշավները և փորձում քաղհասարակությունը ներկայացնել որպես հակապետական տարր, որն այլ երկրների շահերի է սպասարկում: 2020-ի սեպտեմբերին Լեռնային Ղարաբաղում պատերազմի բռնկումից հետո ապատեղեկատվական արշավներն այս պատմույթը շրջեցին՝ քաղաքացիական հասարակությունը որպես «թշնամու գործակալ» (Ադրբեջան կամ Թուրքիա) ներկայացնելու համար, որի նպատակն է խարխլել հայկական պետականության հիմքերը՝

ներառյալ բանակը և եկեղեցին՝ ի նպաստ գլոբալիզմի և լիբերալիզմի:[137] 2020 թվականի սեպտեմբերից ի վեր՝ քաղաքացիական հասարակությունը ներկայացվում է որպես դերակատար, որի նպատակն է կործանել ռուս-հայկական հարաբերությունները, այդ թվում նաև ռազմական ոլորտում, պետության ներսում աշխատող «գործակալների» միջոցով:

## «Արտասահմանյան գործակալներ» պատմույթը

Երկար ժամանակ է, ինչ հասարակական քննարկումներ են ծավալվում Հայաստանում քաղաքացիական հասարակության և երկրի քաղաքացիական հատվածին աջակցելու գործում միջազգային դոնորների դերի մասին: Սրանք հայ հասարակության համար քննարկելու լեգիտիմ հարցեր են: Սակայն վերջին տարիներին այս բանավեճը զենք է դարձել, և կեղծ տեղեկատվական պատմույթների տարածումը սահմանափակում է փաստերի վրա հիմնված առողջ դիսկուրսը: Քաղաքացիական նախաձեռնությունները, քաղաքական և հասարակական գործիչներն այս բանավեճում օգտագործում են իրենց դիրքորոշումը, մասնավորապես՝ արևմտյան ֆինանսավորման դերի մասին, արժեքային համակարգեր և քաղաքական դիրքորոշումներ արտահայտելու համար: Սրա արդյունքում բևեռացված տեղեկատվական էկոհամակարգում քաղաքացիական վերաբերմունքի դրսևորումները շատ արագ մերժվում են՝ որպես օտար կամ սպառնացող, և ակտիվիստները դառնում են ատելության խոսքի կամ կեղծ պատմույթների թիրախ՝ բանավեճում իրենց դիրքի թյուրըմկալման պատճառով:

*Սորոսական* կամ *սորոսականներ* տերմինի գործածության աճը օգնում է բացատրել այս խնդրի զարգացման բնույթը: Սորոսական բառը Հայաստանում սկսեց կիրառվել 2017-ին՝ որպես վիրավորական արտահայտություն քաղաքացիական հասարակության այն անդամների համար, ովքեր իբր հակահայկական մտադրություններ ունեին: 2015-2016 թվականներին հայերենով Facebook-ում արված հանրային գրառումները Սորոսի մասին մեծ մասամբ լրատվամիջոցների կողմից լրատվական հոդվածներ են, որոնցում հաճախ Սորոսի հայտարարությունների թարգմանություններն են տեղ գտել: Շատ քիչ գրառումներ էին նշում Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի (ԲՀՀ) դրամաշնորհառուներին:

*Սորոսական* տերմինը պարունակող հանրային գրառումները տարածված չէին 2018 թվականից առաջ, բայց և Ջորջ Սորոս անունը, և *սորոսական* տերմինը սկսեցին լայնորեն կիրառվել 2018-ին:[138] Այս գրառումների մեծ մասը, կարծես, կեղծ տեղեկատվություն կամ ապատեղեկատվություն է քաղաքացիական հասարակության դերակատարների և պետական պաշտոնյաների մասին, որոնք նախկինում աշխատել են ՀԿ ոլորտում, կամ կեղծ պատմույթները հետաքննելու և հերքելու փորձեր են:[139] *Սորոսական* տերմինը մտել է նաև ժողովրդական լեզու և հաճախ է հիշատակվում ընդհանուր հանրային դիսկուրսում:[140] Դավադրության այս տեսություններն այնքան մեծ թափ են հավաքել, որ դրանց բազմաթիվ առիթներով անգամ անդրադարձել է վարչապետ Նիկոլ Փաշինյանը, նշելով, որ այդ հայտարարությունները վիրավորական են Հայաստանի ցանկացած քաղաքացու համար[141] և բացատրել, որ դրանք թուլացնում են հայերի դերն իրենց արած հեղափոխության գործում:[142]

2018 թվականին *սորոսական* տերմինը սկսեց պարբերաբար հայտնվել առցանց լուսաբանման մեջ, ներառյալ կայքերի, որոնք հաճախ են տարածում կեղծ տեղեկատվական պատմույթները: Օրինակ, «168.am» հայտնի լրատվամիջոցն առաջին անգամ օգտագործեց այս տերմինը 2018-ի օգոստոսին, ինչից հետո այն հայտնվեց հարյուրավոր հոդվածներում:[143] «Hraparak.am»-ը՝մեկ այլ լրատվամիջոց, որը հաճախակի է հրապարակել կեղծ պատմույթներ քաղաքացիական հասարակության մասին, սկսել է օգտագործել այս եզրույթը 2018-ի նոյեմբերից:[144] Նմանատիպ զարգացումը բնորոշ է նաև «Analitik.am» կայքին, որը պատկանում է «ՎԵՏՕ» անդամ Անի Հովհաննիսյանին, ով և խմբագիրն է:[145] «Iravunk.com»-ում *սորոսական* տերմինի գործածության մի դեպք է նկատվել 2017-ին, իսկ ավելի պարբերական հիշատակումները սկսվում են 2018-ի հոկտեմբերից:[146]

Facebook-ում քաղաքացիական հասարակության մասին ապատեղեկատվության հիմնական աղբյուրներից են «ՎԵՏՕ» և «Ադեկվադ» նախաձեռնությունները՝ ռեակցիոն խմբեր, համապատասխանաբար, Նարեկ

Մալյանի (նախկին ոստիկանապետ Վլադիմիր Գասպարյանի խորհրդական) և Արթուր Դանիելյանի (Նիկոլ Փաշինյանի Քաղաքացիական պայմանագիր կուսակցության նախկին անդամ) ղեկավարությամբ:[147] Հեղափոխությունից անմիջապես հետո ստեղծված «Ադեկվադը» և 2019 թվականի մայիսին ստեղծված «ՎԵՏՕ»-ն թիրախավորել են քաղաքացիական հասարակության մեծ թվով անդամների և ակտիվիստների ոչ միայն ապատեղեկատվության, այլև ատելության խոսքի միջոցով: «ՎԵՏՕ» նախաձեռնության Facebook էջի նկարագրությունը հետևյալն է. «Ջորջ Սորոսի և նրա հետ փոխկապակցված բոլոր կազմակերպությունների ու հիմնադրամների արգելափակում ՀՀ տարածքում»:[148] Քաղաքացիական գիտակցություն ՀԿ-ն, նրա հիմնադիր Նարեկ Սամսոնյանը և մի շարք այլ նախաձեռնություններ նույնպես մասնակցում էին քաղհասարակության կազմակերպությունների վերաբերյալ կեղծ պատմույթների, ինչպես նաև ատելության խոսքի և հանրային սպառնալիքների տարածմանը:[149]

Մտահոգիչ է, որ բազմաթիվ պետական պաշտոնյաներ և խոշոր քաղաքական կուսակցությունների անդամներ հզորացնում են քաղաքացիական հասարակության մասին կեղծ և վնասակար պատմույթները: Օրինակ՝ նախկին խորհրդարանական Հայկ Բաբուխանյանը 2017-ին պնդում էր, որ ԲՀՀ Հայաստանը ֆինանսավորում է բողոքի ցույցերը և վճարում խմբերի՝ քաղաքական առաջարկները խափանելու համար:[150] Ազգային ժողովի նախկին փոխխոսնակ և Հանրապետական կուսակցության մամլո խոսնակ Էդուարդ Շարմազանովը[151] սատարում է սորոսականների մասին պետական շահերը խաթարող պատմույթներին:[152] Ազգային ժողովի Բարգավաճ Հայաստան կուսակցության անդամ Նաիրա Զոհրաբյանը խոսել է պետության ներսում գործող «Սորոսի խունտայի» մասին:[153] Վազգեն Մանուկյանն, ով ընդդիմադիր կուսակցությունների կողմից ներկայացված էր որպես վարչապետի ժամանակավոր թեկնածու 2021 թվականին, ամրապնդում է պատմույթները դրամաշնորհ ստացող կազմակերպությունների մասին, որոնք աշխատում են արտաքին հետախուզական գործակալությունների ազդեցության տակ՝ հայկական պետությունը կործանելու համար:[154] Նախկին նախագահ Ռոբերտ Քոչարյանն, ով 2021 թ. հայտարարեց քաղաքականություն վերադառնալու իր մտադրության մասին, նույնպես հրապարակավ մեղադրել է ԲՀՀ-ին և համանման այլ կառույցներին «Հայաստանը դեպի ինքնաոչնչացում տանելու» մեջ:[155]

Անկախ ՔՀԿ-ները, իրավապաշտպան խմբերը և լրատվամիջոցները նման պատմույթների հիմնական թիրախն են, որոնց առերևույթ նպատակն այդ սուբյեկտներին որպես չարորակ արտաքին ազդեցություն պատկերելն է: Ի սկզբանե արշավներն ուղղված էին ԲՀՀ Հայաստանի ներկայիս և նախկին դրամաշնորհառուներին: Այնուամենայնիվ, 2020 թ.-ին *սորոսական* հայեցակարգն աճեց՝ ներառելով հասարակական կազմակերպությունների և նրանց միջազգային դոնորների ավելի լայն շրջանակ: «ՎԵՏՕ»-ի կողմից 2020 թ. դեկտեմբերին ստեղծված «Սորոսի գործակալական ցանցը Հայաստանում բացահայտված է. պետության զավթումը» վերնագրով փաստավավերագրական ոճի դավադրական տեսանյութը պնդում է, որ մեծ թվով հասարակական գործիչներ, մարդու իրավունքների պաշտպաններ և պաշտոնատար անձինք «Սորոսի ցանցի» մաս են կազմում, որն աշխատում է հայկական պետությունը զավթելու համար:[156] YouTube-ում տեղադրված և հետագայում «ArmNews» հեռուստաընկերության կողմից հեռարձակված տեսանյութում ներկայացված են անճշտություններ և թերի տեղեկություններ ԲՀՀ դրամաշնորհառուների գործունեության և ԲՀՀ առաքելության մասին, ինչպես նաև մանիպուլյատիվ, վախի մթնոլորտ ստեղծող լեզու՝ ամրապնդելու այն տեսությունը, ըստ որի՝ ԲՀՀ-ն սպառնում է Հայաստանի պետությանը և հասարակությանը:[157] 2020-ի դեկտեմբերին «Ժողովրդի ձայն» ակումբի ղեկավարները «Sputnik Արմենիայի» գրասենյակներում կայացած մամուլի ասուլիսի ժամանակ պնդեցին, որ միջազգային դոնորների ավելի մեծ խումբ է աշխատում «Հայաստանը ոչնչացնելու» համար, այդ թվում՝ «ԱՄՆ ՄԶԳ» (USAID), «Հանուն ժողովրդավարության ազգային հիմնադրամ» (National Endowment for Democracy), «Sigrid Rausing Trust», և «Հանուն ժողովրդավարության Եվրոպական հիմնադրամ» (European Endowment for Democracy):[158]

Չնայած «Իմ քայլը» կառավարության անդամները, որոնցից շատերը ՔՀԿ նախկին աշխատակիցներ են, ակտիվորեն չեն մասնակցել քաղհասարակության դեմ ապատեղեկատվական արշավներին, նրանք ժամանակ առ ժամանակ վավերացրել են դրանք՝ կիրառելով այն լեզուն, որն օգտագործվում է ռեակցիոն

խմբերի կողմից իրենց քարոզարշավներում:[159] Ավելին՝ իշխանությունները անտեսել են քաղաքացիական հասարակության մասին ապատեղեկատվությունն ամբողջությամբ ցրելու հնարավորությունը: Մինչ ինքը՝ Փաշինյանը, շեշտում էր, որ ԲՀՀ-ի մասին դավադրությունները կեղծ են, նա նաև շեշտում էր, որ Քոչարյանը նախագահ էր, երբ ԲՀՀ Հայաստանը հիմնադրվեց, այդպիսով՝ նա է պատասխանատու «սորոսականների» համար:[160] Կեղծ պատմույթները միանշանակ ցրելու Փաշինյանի դժկամությունը քաղհասարակությանն անպաշտպան է թողել ապատեղեկատվության անընդհատ հոսքի դեմ: Ավելին՝ դա թույլ է տվել, որ ՔՀԿ-ների վերաբերյալ կեղծ պատմույթները դառնան հզոր գործիք և քաղաքական դիրքորոշման մաս:

## Քաղաքացիական հասարակությունն ու ժողովրդավարությունը թուլացրեցին Հայաստանը և հանգեցրեցին ռազմական կորուստների

2020 թվականին Լեռնային Ղարաբաղի երկրորդ պատերազմից հետո քաղաքացիական հասարակության դեմ ապատեղեկատվական արշավները նոր հարթությունում ի հայտ եկան՝ ժողովրդավարությունը և իրավապաշտպան կազմակերպությունները որակելով որպես սպառնալիք Հայաստանի ազգային անվտանգության համար: Նման պատմույթները բոլորովին նոր չէին: 2016-2017 թվականներին Պաշտպանության նախարարությունը ներկայացրեց «ազգ-բանակ» գաղափարն, ըստ որի՝ բոլոր պետական և քաղաքացիական կառույցները պետք է կատարեն ազգային պաշտպանության պարտականությունները: Մի շարք ՔՀԿ-ներ և անկախ դիտորդներ այս հայեցակարգի հետ իրենց անհամաձայնությունը հայտնեցին:[161] Դրանից հետո որոշ հասարակական գործիչներ մատնանշեցին «ազգ-բանակի» քննադատությունը՝ որպես ապացույց, որ ԲՀՀ-ի և նման կազմակերպությունների աշխատանքը վնասում է Հայաստանի զինված ուժերին և, ընդլայնվելով, նաև ազգային անվտանգությանը: ՀՀԿ-ական խորհրդարանականներն ու կառավարությանն առընթեր հաստատությունների ռազմական վերլուծաբաններն այս պատմույթի կողմնակիցներն էին, և նրանք լայնամասշտաբ տեղեկատվական արշավ սկսեցին՝ վարկաբեկելու համար ազգ-բանակ հայեցակարգը քննադատողներին:[162]

2020-ի վերջին քաղաքացիական հասարակության, ժողովրդավարության և ազգային անվտանգության կապը շահարկող ապատեղեկատվությունը կրկին ակտիվացավ: Երևույթը պետք է դիտարկել ավելի լայն համատեքստում, որում հայերը փնտրում էին պատասխաններ Լեռնային Ղարաբաղի երկրորդ պատերազմի ավարտի մասին: Նախկին ռեժիմի անդամները, ընդդիմադիր խմբերը և առնչվող լրատվամիջոցները պատմույթը վերահսկելու առիթն օգտագործեցին՝ Հայաստանի ռազմական կորուստները որպես ժողովրդավարական մտածողության արդյունք ներկայացնելով: Դեկտեմբերին Վազգեն Մանուկյանը, ով պատերազմից հետո պահանջում էր վարչապետ Փաշինյանի հրաժարականը, և որին ընդդիմադիր կուսակցությունները ներկայացնում էին որպես վարչապետի ժամանակավոր թեկնածու, սատարեց այս պատմույթը. «Եթե «ազատություն» բառի տակ թույլ ենք տալիս, որ արտաքին գրանտներով այստեղ բազմաթիվ կառույցներ լինեն, որոնք կաշխատեն արտաքին հետախուզությունների ազդեցության տակ, երկիրը կործանվում է: Պետք է գտնել միջոց, որ այդպիսի գրանտներ չլինեն»:[163] 2021-ի մարտին ռուսական լրատվամիջոցների հետ զրույցում նախկին նախագահ Քոչարյանը այս գաղափարները դրել է Սորոսի դավադրության տեսությունների համատեքստում. «Սորոսի ղեկավարած կազմակերպության և համանման այլ կառույցների գաղափարներն ու արժեքները Հայաստանը տանում են ինքնաոչնչացման»:[164] Չնայած հայտարարությունն արվել էր ռուսական լրատվամիջոցների համար, այն լայնորեն թարգմանվեց և տարածվեց հայկական լրատվամիջոցների կողմից:

2020-ի նոյեմբերին Բարգավաճ Հայաստան կուսակցության անդամ, պատգամավոր, այն ժամանակ Ազգային ժողովի Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Նաիրա Զոհրաբյանը կոչ արեց փակել ԲՀՀ-Հայաստանը՝ պատճառաբանելով, որ դա «թուրքամետ» խումբ է, որը սպառնալիք է ազգային անվտանգությանը:[165] (Դեկտեմբերին նա ազատվեց հանձնաժողովի նախագահի պաշտոնից՝ վարչապետ Փաշինյանի կողմնակիցներին ուղղված ատելության խոսքի համար:[166]) Բարգավաճ Հայաստանի մյուս անդամներն, այնուամենայնիվ,

շարունակեցին նմանատիպ չհիմնավորված պնդումներ անել: Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի լիագումար նիստում Հայաստանի օրենսդիր Միքայել Մելքումյանը ԼՂ երկրորդ պատերազմում պարտությունը կապեց «Սորոսի գաղափարախոսության» հետ, պնդելով, որ ազգային արժեքների հակասությունները նպաստում են այսպիսի արդյունքի:[167] Մելքումյանի ելույթը լայնորեն տարածվեց տեղական լրատվամիջոցների կողմից՝ հաճախ առանց փաստերի ստուգման կամ քննադատական վերլուծության:[168] Չնայած շատ դեպքերում դժվար է ապակողմնորոշելու մտադրությունը նույնականացնելը՝ քաղաքացիական հասարակության մասին կեղծ պատմույթները բավական տարածված են՝ կառավարման բարձրագույն մակարդակներ ներթափանցելու համար:

Նման դիսկուրսն անմիջականորեն ներգրավեց նաև քաղաքացիական հասարակության առանձին ներկայացուցիչների, քանի որ ապատեղեկատվական հիմնական պատմույթները նրանց պատկերում էին որպես Հայաստանում «թշնամու օրակարգի» խթանողներ: Թիրախավորված բազմաթիվ անձանց թվում են եղել նաև ազգագրագետ Հրանուշ Խառատյանը,[169] «Լրագրողներ հանուն մարդու իրավունքների» կազմակերպության ղեկավար Ժաննա Ալեքսանյանը[170] և Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի (ՀՔԱ-Վանաձոր) ղեկավար Արթուր Սաքունցը:[171] «Թշնամու օրակարգի» մասին պատմույթները մի քանի չհիմնավորված շրջադարձ ունեցան: Նախ՝ նրանք օգտագործեցին Լեռնային Ղարաբաղում Հայաստանի կորուստները՝ որպես ապացույց, որ Փաշինյանի կառավարությունը սատարում է կամ «աշխատում է» թուրքական պետության համար: Երկրորդ, այս պատմույթները ռազմական կորուստների պատասխանատվությունը տարածում էին քաղաքացիական հասարակության այն ներկայացուցիչների վրա, ովքեր ընկալվում էին որպես «Իմ քայլը» դաշինքին սատարող կողմ և պնդում, որ այդ անձինք հզորացնում են այն կառավարությանը, որն աջակցում է Թուրքիային:[172] Հայ-ռուսական հարաբերությունները նույնպես դեր ունեցան նման պատմույթներում, քանի որ բազմաթիվ ՔՀԿ-ներ և անկախ ակտիվիստներ ներկայացվեցին որպես հակառուսական քարոզչության ուժեր[173] և որպես հայ-ռուսական ռազմական համագործակցության հակառակորդներ. պատմույթ, որն իր հերթին օգտագործվել է այն գաղափարին աջակցելու համար, թե քաղաքացիական հասարակությունը թուլացնում է ազգային անվտանգությունը:[174] Ազգային ժողովի նախկին փոխխոսնակ, ՀՀԿ խոսնակ Էդուարդ Շարմազանովը նույնպես Կրեմլի քննադատներին որակել է որպես ինքնաբերաբար թուրքամետ (և այդպիսով՝ հայկական պետության թշնամի),[175] մինչդեռ ԲՀԿ-ական Արման Աբովյանը նման հայացքները հավասարեցրել է «հայ ժողովրդի թշնամի» լինելուն և «թուրքերից վատ լինելուն». մի պատմույթ, որն ըստ ամենայնի ներկայացնում է Ռուսաստանը՝ որպես Հայաստանի միակ դաշնակից (և հաշվի չի առնում Ռուսաստանի կայուն հարաբերությունները Թուրքիայի և Ադրբեջանի հետ):[176]

## ՔՀԿ նախաձեռնությունների դեմ արշավներն ու դրանց հետևանքները հայկական ժողովրդավարության համար

Հակա-ՔՀԿ և հակաժողովրդավարության մասին ապատեղեկատվական պատմույթների հեղեղը 2018 թվականից ի վեր զգալիորեն վնաս է հասցրել հայաստանյան ՔՀԿ-ների և նրանց անդամների հեղինակությանը: Ավանդաբար, Հայաստանի քաղաքացիական հասարակությունը հանդես է եկել որպես դիտորդ և համախմբող՝ հաճախ փոխարինելով ընդդիմադիր կուսակցություններին և ստանձնելով նրանց դերը ժողովրդավարական համակարգերում: Այս դերերը հատկապես կարևոր էին 2018 Թավշյա հեղափոխության ժամանակ, երբ քաղաքացիական հասարակության բազմաթիվ անդամներ ոչ միայն շարունակեցին բողոքի ցույցերը, այլ նաև որոշ դեպքերում դրանք կազմակերպեցին և ղեկավարեցին:[177] Այնուամենայնիվ, ՔՀԿ-ների դեմ 2018 թվականից ի վեր ապատեղեկատվական բազմաթիվ արշավներ խրախուսում են քաղաքացիական հասարակությանը դուրս մղել կարևոր գործընթացներից և խոսակցություններից՝ նրանց որակելով որպես հայկական պետության համար վնասակար:

Քաղաքացիական հասարակության կողմից կառուցողական բարեփոխումներ առաջարկելու կամ քննարկելու մի քանի փորձերն ապատեղեկատվական ալիքներ են առաջացրել: Վերջերս տեղի

ունեցած մի օրինակ վերաբերում է իրավունքների պաշտպանության ոլորտում աշխատող ՔՀԿ-ների և արդարադատության նախարար Ռուստամ Բադասյանի ներգրավվածությանը 2021 թ. փետրվարին կայացած հանդիպմանը՝ քննարկելու ՔՀԿ-ների մտահոգությունները դատական ոլորտի բարեփոխումների վերաբերյալ:[178] Խորհրդակցությունից անմիջապես հետո լրատվամիջոցներից մի քանիսը հաղորդեցին, որ Բադասյանը հանդիպել է «սորոսականների հետ»՝ քննարկելու դատական բարեփոխումների համատեղ ջանքերը, և սա ամրացրին Սորոսի ազդեցության տակ գտնվող քաղաքացիական հասարակության կեղծ պատմույթը, ըստ որի՝ այն իշխանություն ունի պետության վրա:[179] Մեկ այլ օրինակում, ԲՀՀ Հայաստանը և գործընկեր կազմակերպությունները 2019 թվականին հրատարակեցին «Հայաստանի Հանրապետության վերականգնմանն ուղղված անհրաժեշտ բարեփոխումների հայեցակարգ (ճանապարհային քարտեզ)», որը պարունակում է ժողովրդավարական ինստիտուտների ամրապնդման, դատական, կրթական բարեփոխումների և նմանատիպ այլ ջանքերի մասին քաղաքականության առաջարկների վերլուծություն:[180] Հրապարակումից հետո մի շարք հայտնի ապատեղեկատվական հարթակներ, այդ թվում՝ «Antifake.am»-ը, որը ներկայացվում է որպես փաստեր ստուգող կայք, արշավ սկսեցին փաստաթղթի բովանդակությունն ու նպատակները խեղաթյուրելու համար:[181] «ՎԵՏՕ»-ն նույնիսկ ներառեց փաստաթուղթը 2020 թվականի դեկտեմբերին նկարահանած «Սորոսի գործակալական ցանցը Հայաստանում բացահայտված է. Պետության զավթումը» ֆիլմում:[182]

Նման արշավներից հետո «Իմ քայլը» կառավարությունը սկսել է ավելի զգուշորեն վերաբերվել քաղաքացիական հասարակությանն ու կարծես իրենից հեռու է պահում «սորոսական» պիտակը կրող մարդկանց և կազմակերպություններին: Այս արշավներն աշխատել են նաև քաղհասարակությունը և նրա աշխատանքից բխող գաղափարների, առաջարկների և լուծումների հարստությունը վարկաբեկելու ուղղությամբ:

Ընդհանուր արդյունքը ՔՀԿ-ների՝ քաղաքական քննարկումներին նշանակալի մասնակցություն ունենալու և օրենսդրական բարեփոխումները զարգացնելու և խթանելու նրանց ներուժն ու կարողությունների սահմանափակումն է: Հասարակական վստահությունը գերակա է քաղաքացիական հասարակության՝ իր դերը կատարելու կարողության նկատմամբ, և ապատեղեկատվական արշավները կարող են խաթարել այդ հարաբերությունների հիմքը:

Ապատեղեկատվության մեջ «օտարերկրյա գործակալներ» կամ «Արևմուտքի գործակալներ» պիտակներն ուղղակի ազդեցություն ունեն ՔՀԿ ներկայացուցիչների կյանքի և աշխատանքի վրա: Նախ՝ այս պիտակներն ու ուղեկցող պատմույթները ապառնալիքի տակ են դնում նրանց անվտանգությունն ու ապահովությունը: 2020-ի նոյեմբերին՝ ԼՂ պատերազմը դադարեցնելու մասին Ռուսաստանի միջնորդությամբ ստորագրված հայտարարությունից անմիջապես հետո, Ազատ Եվրոպա/Ազատություն ռադիոկայանի երևանյան գրասենյակների[183] և ԲՀՀ-Հայաստան գրասենյակների վրա[184] խմբեր հարձակվեցին: Երկրորդ՝ այս պատմույթները քաղաքացիական հասարակության շրջանում հանգեցրին ինքնագրաքննության, մասնավորապես, արտաքին քաղաքական զրույցների համատեքստում: Երրորդ՝ այս պատմույթներն ընդհանուր հանրության աչքում խաթարում են ՔՀԿ-ների հայտարարությունների լեգիտիմությունը հատկապես վիճահարույց թեմաների շուրջ, ինչպիսիք են արտաքին քաղաքականությունն ու ազգային անվտանգությունը: Այս գործընթացը կարող է նվազեցնել հասարակության համար քննադատական դիսկուրսի այս կարևոր աղբյուրի հասանելիությունը:

Քաղաքացիական հասարակությունը սկզբունքորեն նպատակ ունի ներկայացնել և առաջ տանել ժողովրդի կամքը, և քաղաքացիական հասարակության և ընդհանրապես հասարակության միջև սահմանը լավագույն դեպքում արհեստական է: ՔՀԿ-ներին ուղղված թյուր պատմույթների շարքն, այնուամենայնիվ, քաղաքացիական հասարակության և ավելի լայն հասարակության միջև անջրպետ ստեղծելու ներուժ ունի: Այս երևույթը հատկապես վնասաբեր է հիմա, երբ երկիրն առերեսվում է երկրի դաշնակիցների, արժեհամակարգերի և քաղաքականության վերաբերյալ հարցերի՝ ԼՂ երկրորդ պատերազմի հետևանքների ֆոնին: Այս հարցերն, ամենայն հավանականությամբ, կլինեն բանավեճերի

առաջին շարքում 2021 թվականի հունիսի արտահերթ խորհրդարանական քվեարկությանն ընդառաջ և դրանից հետո ծավալվելիք քաղաքական քննարկումներում: Նախորդ ընտրությունների ժամանակ քաղաքացիական հասարակության անդամները կարևոր դեր են խաղացել և՛ որպես ընտրական դիսկուրսի մաս, և՛ որպես ժողովրդավարական այս հիմնարար գործընթացի դիտորդներ: Այս դերերը կատարելու նրանց ունակությունը՝ հայ հասարակության վստահությամբ, գերակա է Հայաստանի նորաստեղծ ժողովրդավարության հաջողության համար:

# Սոցիալական և մշակութային խնդիրներ

Արշալույս Բարսեղյան

Այս բաժնի նպատակն է վերլուծել Հայաստանում շրջանառվող սոցիալական և մշակութային խնդիրների վերաբերյալ վերջին կեղծ տեղեկատվության և ապատեղեկատվության պատմույթները և բացատրել դրանց ազդեցությունը Հայաստանում ժողովրդավարական մշակույթի վրա: Վերջին չորս տարիների ընթացքում կեղծ պատմույթների հիմնական թեմաներն էին Ստամբուլյան և Լանզարոտեի կոնվենցիաները, հանրակրթության նոր չափորոշիչները և որոշ մշակութային իրադարձություններ և արտադրանքներ:

Այս բաժինը ուսումնասիրում է այս թեմաների տեղեկատվական էկոհամակարգը, բացահայտում դրանց կողմից շահարկվող խոցելի կողմերը և գնահատում հետևանքները: Այս հարցերի վերաբերյալ կեղծ տեղեկատվությունն ու ապատեղեկատվությունը տարածված են եղել առցանց լրատվամիջոցներում, հեռուստատեսությունում, սոցիալական ցանցերում և պաշտոնատար անձանց, քաղաքական կուսակցությունների, քաղաքացիական խմբերի և մասնավոր քաղաքացիների հրապարակային հայտարարություններում: Բազմաթիվ տեղեկատվական արշավներ, որոնք թիրախավորում են սոցիալական և մշակութային հիմնախնդիրները, նպատակ ունեն շահարկել արժեքների վրա հիմնված բաժանումները և հրահրել անհանդուրժողականություն Հայաստանի հասարակության մեջ, որպես նպատակ ունենալով օգտագործել այդ բաժանումները երկրում քաղաքական իշխանությունը փոխելու համար:

Սոցիալական և մշակութային խնդիրների մասին ապատեղեկատվությունը լուրջ հետևանքներ ունի Հայաստանում ժողովրդավարական մշակույթի զարգացման վրա:

Ինքնության, արժեքների և մշակութային տեսլականի մասին կեղծ պատմույթները դարձել են խմբերի և համայնքների «այլացման» գործիք, այդ պատմույթներին անդրադառնալը և դրանց հետևանքները զսպելը հայերի համար ընդհանուր ապագա կերտելու կարևոր քայլեր են: Մարդու իրավունքների ավելի լայն շրջանակում ներառականությունն ու հզորացումն առողջ ու ծաղկող ժողովրդավարության պահանջներն են:

## Ստամբուլյան և Լանզարոտեի կոնվենցիաների մասին պատմույթներ

Վերջին տարիներին մեծաքանակ կեղծ պատմույթների առարկա են հանդիսանում Եվրոպայի խորհրդի երկու կոնվենցիաներ՝ «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» կոնվենցիան (Ստամբուլյան կոնվենցիա) և «Սեռական շահագործումից և

սեռական բռնությունից երեխաներին պաշտպանելու մասին» կոնվենցիան (Լանզարոտեի կոնվենցիա):[185] Կեղծ պատմությունները հիմնականում հղում են կատարում ազգային գոյաբանական մտահոգություններին՝ պնդելով, որ կոնվենցիաները հակասում են հայկական արժեքներին ու ազգային ինքնությանը և սպառնում են հայկական ընտանիքների ամբողջականությանը: Նմանատիպ պատմությունների կողմնակից են մեծամասամբ պահպանողական քաղաքացիական խմբերը և քաղաքական կուսակցությունները, հիմնականում տղամարդիկ, որոնք ակտիվորեն խեղաթյուրում են կոնվենցիաները ազգային արժեքների և Հայաստանի ապագայի ուղղության վերաբերյալ հանրային բանավեճ առաջացնելու համար: Նմանատիպ պատմությունները ծառայում են նաև քաղաքական շահերի. Ստամբուլյան կոնվենցիայի դեպքում ապատեղեկատվությունը բացասաբար է ազդել երկրի քաղաքական ուղղության վրա, և երկու կոնվենցիաների դեպքում էլ պատմությունները ծառայել են որպես քաղաքական կողմնորոշման ազդանշան:

**Եվրոպայի խորհրդի Ստամբուլյան կոնվենցիան** միջազգային պայմանագիր է, որի նպատակն է կանխարգելել կանանց նկատմամբ կիրառվող ընտանեկան բռնությունը, պաշտպանել տուժածներին և վերջ դնել հանցագործների անպատժելիությանը: Հայաստանը ստորագրեց Ստամբուլյան կոնվենցիան 2018թ. հունվարին, բայց վավերացումը մինչ օրս կանգ է առել և անքակտելիորեն կապվել է Հայաստանում գոյություն ունեցող, սեռով պայմանավորված բռնության ավելի ծավալուն զարգացումների հետ:

2019թ. հունիսին «Hetq.am» հետաքննական լրատվամիջոցը հրապարակեց Չեխիայի Հանրապետությունից ժամանած Վանաձորում բնակվող արվեստագետ և կամավոր Եվայի պատմությունը, որը սեռական բռնության է ենթարկվել Հայաստանում և բախվել սեռական բռնության զոհերի համար ռեսուրսների սակավության խնդրին:[186] Եվայի պատմությանը հետևեց լրագրող Լյուսի Քոչարյանի սկսած առցանց արշավը՝ #բռնության_ձայնը հեշթեգի ներքո: Ամբողջ Հայաստանից ֆեյսբուքյան օգտատերերը կիսվում էին սեռական ոտնձգությունների և բռնության իրենց պատմություններով, ինչն առաջացրեց զոհերի համար արդարության վերականգմանը խոչընդոտող մշակութային նորմերի և ճնշումների վերաբերյալ քննարկում: Քոչարյանը Ֆեյսբուքում անանուն հրապարակեց հարյուրավոր պատմություններ, ինչը բերեց սեռական ոտնձգությունների և բռնության վերաբերյալ նախադեպը չունեցող առցանց քննարկման:[187] Հաջորդող հանրային բանավեճը, որի ընթացքում հնչեցին պատմությունների կեղծ լինելու վերաբերյալ մեղադրանքներ, ի հայտ բերեց սոցիալական համատեքստ, որում պաշտոնյաները սկսեցին քննարկել Ստամբուլյան կոնվենցիայի վավերացումը:[188]

Պահպանողական խմբերը կազմակերպեցին արշավներ ընդդեմ Ստամբուլյան կոնվենցիայի վավերացման և սկսեցին ապատեղեկատվական արշավ, որը խեղաթյուրում էր կոնվենցիայի բովանդակությունը և խնդիրները: 2019թ. հուլիսին «Կամք» քաղաքացիական նախաձեռնությունը ստորագրահավաք նախաձեռնեց վավերացման դեմ: «Կամքը» շրջում էր Երևանի և այլ քաղաքների հանրային վայրերով՝ պնդելով, որ կոնվենցիան հակասում է «հայկական արժեքներին»:[189] Նրանց փաստարկները հիմնված էին կոնվենցիայի՝ ամուսնությանն ու սեռերին վերաբերող տերմինների խեղաթյուրման վրա և մեծապես ապավինում էին ալարմիստական կոչերին: Ստորագրահավաքն անցկացնողները պնդում էին, որ Ստամբուլյան կոնվենցիան յուրաքանչյուրին իրավունք կընձեռի արտահայտել «անընդունելի» կողմնորոշումներ, մեծահասակներին կզրկի իրենց երեխաների և կողակիցների «անբարո վարքը սահմանափակելու» կարողությունից և թույլ կտա երեխաներին դատի տալ իրենց ծնողներին, եթե վերջիններս համաձայն չեն նրանց սեռական կողմնորոշման, պահվածքի և «հակազգային որոշումների» հետ. ստորագրահավաքը չի սահմանում այս ընդգրկուն տերմինը:[190] 2019թ. սեպտեմբերի դրությամբ հազարավոր անհատ քաղաքացիներ, գործող և նախկին պաշտոնյաներ ստորագրեցին «Կամքի» խնդրագիրը, և մի շարք այլ պահպանողական խմբեր, այդ թվում «ՎԵՏՕ» նախաձեռնությունը, կազմակերպեցին արշավներ ընդդեմ վավերացման: Հայ առաքելական եկեղեցին ևս դեմ էր վավերացմանը և 2019թ. հուլիսին տարածեց պաշտոնական հայտարարություն, որը մեղադրում էր կոնվենցիան հայերի «ազգային-հոգևոր ինքնությանը և անվտանգությանը» հակասելու մեջ:[191] 2019թ. դեկտեմբերին «Կամք»-ի անդամները բռնության ենթարկեցին մի կնոջ, ում հետ Երևանում՝ Ազգային ժողովի շենքի մոտակայքում, ստորագրահավաքի ժամանակ տարաձայնություն էին ունեցել:[192]

Եկեղեցու հայտարարությունը և «Կամք»-ի, «ՎԵՏՕ»-ի և համախոհ խմբերի հռետորաբանությունը հիմնված են Ստամբուլյան կոնվենցիայի բովանդակության մի քանի խեղաթյուրումների վրա: Նախ՝ նրանք պնդում են, որ կոնվենցիան օրինականացնում կամ ինչ-որ կերպ տարածում է նույնասեռական ամուսնությունը, որի իրավունքը Հայաստանում չկա: Կոնվենցիան չի սահմանում ամուսնությունը կամ ընտանիքը, և այն չի հակասում ազգային օրենսդրության մեջ արդեն իսկ գոյություն ունեցող ամուսնության սահմանումներին: Վենետիկի հանձնաժողովը հաստատել է այս փաստերը 2019թ. հոկտեմբերին հրապարակված կարծիքում՝ ուղղակիորեն ի պատասխան Հայաստանում Ստամբուլյան կոնվենցիայի սահմանադրական ազդեցությունների վերաբերյալ մտահոգություններին:[193] Երկրորդ՝ Հայ առաքելական եկեղեցին պնդում էր, թե կոնվենցիան պարունակում է «երրորդ սեռի» հայեցակարգ. այս կեղծիքը կոնվենցիայի վավերացման վերաբերյալ հանրային բանավեճի լրջագույն թեման դարձավ:[194] Իրականում կոնվենցիան ընդամենը սահմանում է գենդերային պատկանելիությունը՝ որպես «սոցիալական դերեր, վարքագծի տիպեր, գործունեության տեսակներ և հատկություններ, որոնք տվյալ հասարակությունը դիտում է պատեհ կանանց և տղամարդկանց համար»:[195] Կոնվենցիայի՝ գենդերի և ամուսնության մոտեցման խեղաթյուրումը առաջ է բերել ավելի ծավալուն կեղծ պատմույթ այն մասին, թե կոնվենցիան տարածում է ԼԳԲՏ+ իրավունքները, ինչը, պահպանողական խմբերի ձևակերպմամբ, անհամատեղելի է «հայկական արժեքների» հետ:[196] Արժեքների թեման մեծ դեր է խաղացել կոնվենցիայի դեմ քարոզարշավում: Տեղական իրավապաշտպան կազմակերպություններից Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեն (ԽԱՊԿ) 2020թ. հունիսին հրապարակեց զեկույց լրատվամիջոցների կողմից «եվրոպական արժեքների» ներկայացման վերաբերյալ, որը պարզել էր, որ 2019թ. այս թեմայի ներկայացման ամենատարածված վեկտորը Ստամբուլյան կոնվենցիան է եղել:[197] Զեկույցը բացահայտում է կոնվենցիայի և «եվրոպական արժեքների» կեղծիքների և խեղաթյուրումների մեծ ամբողջություն, ինչպես նաև նշված են այն աղբյուրները, որոնք մեծապես ստեղծում են նմանատիպ նյութեր. տպագիր մամուլից՝ «Իրավունք» թերթը, հեռուստատեսային աղբյուրներից՝ ռուսական «ՌՏՌ Պլանետա»-ն և հայկական «5-րդ ալիք»-ը, առցանց աղբյուրներից՝ «News.am»-ը:[198]

2020թ. Ստամբուլյան կոնվենցիայի վավերացման վերաբերյալ բանավեճը փաստաթղթային ձևակերպում լինելուց վերածվեց երկրում ավելի ծավալուն քաղաքական բարեփոխում անելու առիթի: Այս նոր հարթությունը կապեց կոնվենցիան իշխանությունների կողմից ծրագրված սահմանադրական հանրաքվեի հետ, որն ուղղված էր երկար բանավեճեր հարուցող Հայաստանի Սահմանադրական դատարանի փոփոխությանը: Հանրաքվեն, որը չեղարկվեց COVID-19-ի պատճառով, վերաբերում էր Սահմանադրական դատարանի ինը դատավորներից յոթի, այդ թվում նաև նախագահի, արձակման վերաբերյալ հակասական առաջարկին. սրա նպատակն էր պարզեցնել օրենսդրական լիազորությունների ժամկետների սարդոստայնը, որի պատճառով դատարանը հայտնվել էր լեգիտիմության ճգնաժամի մեջ:[199] Իշխանության՝ հանրաքվեի վերաբերյալ ծրագրի հայտարարումից հետո որոշ քաղաքական գործիչներ մեղադրեցին Իմ քայլի ձևավորած կառավարությանը Սահմանադարական դատարանի փոփոխությունների միջոցով Ստամբուլյան կոնվենցիայի վավերացման փորձի մեջ: Հայաստանի հանրապետական կուսակցության խոսնակ Էդուարդ Շարմազանովը, օրինակ, սոցիալական կայքերում և «168.am»-ի հետ հարցազրույցի ժամանակ նշեց, որ սահմանադրական փոփոխություններին աջակցել նշանակում է աջակցել Ստամբուլյան կոնվենցիային և դրա «տրանսգենդերության, հակապետական, հակազգային քարոզին»:[200]

Այդ պատմույթները շահագործում են գենդերի և սեռական ինքնության վերաբերյալ մշակութային զգայուն կետերը՝ կոնվենցիայի տեքստի մի շարք խեղաթյուրումների հաշվին: Իրենց էությամբ այդ պատմույթները վախ առաջացնող և կեղծ խեղաթյուրումներ են և օգտագործվում էին «ՎԵՏՕ», «Կամք» և նմանատիպ խմբերի կողմից՝ ապատեղեկատվություն տարածելու համար: Մինչ կոնվենցիան հնարավորություն էր տվել հայերին դիմակայելու սեռով պայմանավորված բռնության խնդրին, այս արշավները, փոխարենը, շեղեցին հանրային ուշադրությունը դեպի կեղծ բանավեճերը:

**Լանզարոտեի կոնվենցիան.** 2020թ. մայիսին Ազգային ժողովը վավերացրեց Եվրոպայի խորհրդի «Սեռական շահագործումից և սեռական չարաշահումներից երեխաների պաշտպանության մասին

կոնվենցիան»՝ այն ստորագրելուց տասը տարի անց: Առավել հայտնի որպես Լանզարոտեի կոնվենցիա՝ այն նպատակ ունի քրեականացնել երեխաների նկատմամբ բռնության ձևերը և օրինական պաշտպանություն տրամադրելու բռնության և շահագործման զոհերին: Այս կոնվենցիայի վերաբերյալ կեղծ տեղեկատվության և ապատեղեկատվության հիմքերն են կոնվենցիայի տեքստի սխալ մեկնաբանումները և կեղծ պատմությունները, որոնք փաստաթուղթն ամենուր ներկայացնում են որպես սպառնալիք երեխաների համար:

Տարածված պատմություններից մեկը ներառում է կոնվենցիայի կրթական բաղադրիչը: Բռնությունը կանխարգելելու նպատակով Լանզարոտեի կոնվենցիան պետություններին խորհուրդ է տալիս ապահովել երեխաների տեղեկացվածությունը բռնության ռիսկերի վերաբերյալ, և ուսուցիչները, սոցիալական աշխատողները և երեխաների հետ աշխատող այլ մասնագետներ սովորում են ճանաչել և արձագանքել բռնության նշաններին: Կոնվենցիան չի նախատեսում դասավանդման մեթոդաբանություն կամ կոնկրետ բովանդակություն, սակայն խրախուսում է պետությանը, երբ տեղին է լինում, աշխատել ծնողների հետ:[201] 2020թ. մայիսին «168.am»-ը հրապարակեց հարցազրույց սեքսոլոգ և հանրային դեմք, բժիշկ Նարինե Ներսիսյանի հետ, որում նա պնդում էր, որ Լանզարոտեի կոնվենցիայով չափազանց շուտ է սկսվում սեռական կրթությունը: Նա պնդում էր, որ կոնվենցիան նախատեսում է մեկնարկել սեռական կրթության դասերն առաջին դասարանից, սակայն, իրականում, այն չի նախատեսում կոնկրետ ժամանակային պատուհան կամ մեթոդներ, բայց բժիշկ Ներսիսյանի կարծիքը և նմանատիպ այլ կարծիքներ օգնում են կոնվենցիայի նպատակների վերաբերյալ թյուր պատկերացումներ տարածել:

Նման պատմությունները ներառում են ապատեղեկատվություն կրթության մասին՝ պնդելով, որ տարրական դպրոցում սեռական դաստիարակություն թույլատրելով՝ Լանզարոտեի կոնվենցիան թույլ է տալիս երեխաներին զբաղվել սեքսով կամ սովորեցնում նրանց՝ ինչպես «ընտրել» սեռական կողմնորոշում:[202] Սա իր հերթին խուճապ առաջացրեց կոնվենցիայի՝ ԼԳԲՏ+ հարցերի հետ կապի վերաբերյալ: Հայ առաքելական եկեղեցու ներկայացուցիչը պնդում էր, որ ԼԳԲՏ+ իրավունքները սատարող ՀԿ-ները կոնվենցիայի շնորհիվ հնարավորություն են ստացել դպրոցներում երեխաներին դասավանդելու:[203] Իրավաբան և Փաստաբանների պալատի մի անդամ նշում է, որ կոնվենցիայի հետևում կանգնած են «ԼԳԲՏ քարոզի» կողմնակիցները:[204]

Կեղծ պատմությունների մեկ այլ շարան կենտրոնացած է վաղ տարիքում սեռական հարաբերությունների վրա: Արդարադատության նախկին նախարար և Երևանի պետական համալսարանի Սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ Գևորգ Դանիելյանը պնդում է, որ կոնվենցիան հանգեցրել է Հայաստանի քրեական օրենսգրքի փոփոխության, որը ցանկացած տարիքի երեխայի թույլ է տալիս համաձայնեցված սեռական կապեր ունենալ ցանկացած մեկի հետ:[205] Փաստերի ստուգման հարթակը պարզել է, որ Դանիելյանի պնդումներն իրականությանը չեն համապատասխանում. քրեական օրենսգիրքը չի փոփոխվել, և կոնվենցիան չի պարունակում համաձայնության տարիքի կամ երեխաների միջև համաձայնեցված գործողությունների վերաբերյալ որևէ կոնկրետ դրույթ:[206]

Այս ապակողմնորոշող պատմությունները գրավել են հանրության ուշադրությունը 2020 թվականի մայիս և հունիս ամիսներին: Մայիսի վերջին մի քաղաքացի Facebook-ում հրապարակեց մի հոլովակ, որում պնդում էր, որ իր երեխային Երևանի կենտրոնում մի կին ռուսերեն լեզվով սեռական դաստիարակության գիրք է տվել:[207] Տեսահոլովակն արագ տարածվեց և լուսաբանվեց խոշոր առցանց աղբյուրների և հանրային գործիչների կողմից: «Media.am»-ը պարզեց, որ լրագրողները և պաշտոնյաները, պատմության ծավալմանը զուգահեռ, դրան նոր կողմեր են ավելացրել: Օրենսդիրն, օրինակ, ձևակերպեց այն որպես գրքերի լայն տարածում (եզակի դեպքի փոխարեն), իսկ որոշ լրատվամիջոցներ կապվեցին Կանանց ռեսուրսային կենտրոն ՀԿ-ի և Փինք Արմենիա ԼԳԲՏ+ իրավունքների խմբի հետ պարզելու համար՝ արդյոք վերջիններս ներգրավված էին:[208] Ոստիկանական հետաքննության արդյունքում պարզվեց, որ երեխան այդ գիրքը գտել է փողոցից, սակայն տեսանյութի բնօրինակը, որը պարունակում էր նմանատիպ գրքեր երեխաների շրջանում տարածողների հասցեին ուղղված դաժան սպառնալիքներ, շարունակեց շրջանառվել սոցիալական հարթակներում:[209]

Լանզարոտեի կոնվենցիայի մասին աղավաղված առցանց լուսաբանումը համատարած էր, և որոշ լրատվամիջոցների կողմից դրա ներկայացման եղանակն ուղղակիորեն կախված էր նրանց քաղաքական կողմնորոշումից: Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի 2021 թ. «Հայկական առցանց լրատվամիջոցներում ապատեղեկատվության տարածման օրինաչափությունները» զեկույցը պարզել է, որ Հայաստանի երեք ամենահայտնի առցանց լրատվամիջոցները՝ «News.am», «Tert.am», և «168.am», 2020 թ. մայիսին և հունիսին անցկացված մշտադիտարկման ընթացքում մեծամասամբ Լանզարոտեի կոնվենցիան ներկայացրել են որպես երեխաներին սեռական բռնության վտանգի ենթարկող:[210] Սա մշտադիտարկված հոդվածների 30 տոկոսի հիմնական միտքն էր: Երկրորդ ամենատարածված հաղորդագրությունը, որն արտահայտված էր մոտ 23 տոկոսում, այն էր, որ Լանզարոտեի կոնվենցիան պաշտպանում է երեխաներին սեռական բռնությունից, ինչն իրականում և հանդիսանում է կոնվենցիայի նպատակը:[211]

## Հանրակրթության նոր չափորոշիչներ

2020-ի հունիսին Ազգային ժողովը սկսեց հանրակրթության նոր չափորոշիչների քննարկումները. օրենսդրության նախագիծ, որն առաջարկում էր հանրային ուսումնական հաստատություններում անցկացնել լայնածավալ բարեփոխումներ:[212] Ի թիվս այլ փոփոխությունների՝ նախագիծն առաջարկում էր ներառել Հայ առաքելական եկեղեցու պատմությունը, որը նախկինում դասավանդվում էր որպես առանձին առարկա, հայոց պատմության ընդհանուր դասընթացի մեջ: Պահպանողական խմբերը և Հայ առաքելական եկեղեցին փնովեցին նախագիծը՝ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը մեղադրելով պետական կրթական համակարգից ազգային արժեքները ջնջելու մեջ:[213]

Հանրակրթության նոր չափորոշիչների վերաբերյալ կեղծ և ապակողմնորոշող պատմությունների մեծամասնությունը կենտրոնանում է սեռական կրթության ներառման վրա: «Analitik.am» լրատվական կայքի խմբագիր և «ՎԵՏՕ»-ի անդամ Անի Հովհաննիսյանը կեղծ պնդում է արել, որ նոր չափորոշիչները ներմուծում են սեռական օրգանների տարբերակման վերաբերյալ գիտելիքներ (ինչն արդեն իսկ սեռական կրթության մաս է) և երեխաներին սովորեցնում են հակաբեղմնավորիչների օգտագործման մասին (ինչը կատարվում է միայն ավագ դպրոցում):[214] Հովհաննիսյանն օգտագործեց այս պնդումներն՝ օժանդակելու համար իր Անվտանգ կրթություն հարթակը՝ ընտանիքների, ուսուցիչների և կրթության ոլորտի փորձագետների համատեղ նախաձեռնություն, որը մաքրելու էր «վտանգավոր» նյութերն ուսումնական ծրագրից:[215] Հովհաննիսյանը նաև պնդում էր, որ ուսումնական ծրագրի փոփոխությունները Լանզարոտեի կոնվենցիայի հետևանք են, և կապում էր կրթական բարեփոխումներն ապակողմնորոշող, հուզառատ պատմություններին, որոնք շրջանառվում էին կոնվենցիայի վավերացման առնչությամբ:[216] Բժիշկ Նարինե Ներսիսյանն, ով ընդդիմադիր կարծիք հայտնելիս սխալ էր ներկայացնում կոնվենցիայի բովանդակությունը, պնդում էր, որ ուսումնական ծրագիրը «կհանգեցնի Հայաստանում նույնասեռականների թվի աճին»:[217]

## Մշակութային իրադարձություններ

Վերջին տարիների մշակութային իրադարձությունները և արվեստագիտական դրսևորումներն ապակողմնորոշող պատմությունների պատճառ են հանդիսացել և որոշ դեպքերում ներառվել հայկական արժեքներին սպառնալիքների մասին առավել լայն պատմությունների մեջ: Օրինակ, 2019 թ. հոկտեմբերին Փաշինյանների ընտանիքին պատկանող «Armtimes.com»-ը հրապարակեց մի պատմություն մարզիկ Մել Դալուզյանի մասին վավերագրական ֆիլմի նկարահանմանը պետական ֆինանսական աջակցության տրամադրման վերաբերյալ. նա տրանսգենդեր տղամարդ է, որը նախքան անցումը հանդիսացել է Հայաստանի ծանրամարտի կանանց հավաքականի անդամ:[218] Այս նորությունն առաջացրեց խիստ բացասական արձագանք պահպանողականների մոտ. քննադատները պնդում էին, որ կառավարությունը սատարում է «ԼԳԲՏ քարոզչությանը», և ֆիլմը տարածում է «տրանսգենդերիզմի բիզնեսը»:[219]

Միևնույն ժամանակ Դալուզյանը, ով իր ինքնության պատճառով խտրականության բախվելուց հետո արտագաղթել է Նիդերլանդներ, դարձավ կեղծ պատմությունների թիրախ:[220] Բարգավաճ Հայաստան

կուսակցության անդամ Նաիրա Զոհրաբյանը, մի խումբ մարզիկներ և սպորտի պետական պաշտոնյաներ պնդեցին, որ որպես Դալուզյանի կողմից դոպինգի օգտագործման հետևանք հայ ծանրամարտիկները զրկվել են 2020 թվականին Օլիմպիական խաղերին մասնակցելու հնարավորությունից:[221] 2018 թվականին «Hetq.am»-ի կողմից անցկացված հետաքննությունը պարզել էր, որ ոչ միայն Դալուզյանը, այլ մեկ տասնյակից ավելի հայ մարզիկներ տարիներ շարունակ ընդունել են դոպինգ:[222] Դալուզյանի մասին պնդումների բարձրաձայնման պահին դեռևս չէր կայացվել որոշում հայերի՝ Օլիմպիական խաղերին մասնակցությունն արգելելու մասին:[223] Ազգային ժողովի որոշ անդամներ օգտագործեցին այս հնարավորությունը նույնասեռական ամուսնություններն ու նույնասեռական զույգերի կողմից երեխաների որդեգրումն արգելելն առաջարկելու համար՝ չնայած Հայաստանում բացակայում է նույնասեռական ամուսնության իրավունքը:[224]

Մի շարք պահպանողական խմբեր և առցանց աղբյուրներ տարածում էին Հայաստանում նաև արվեստագիտական դրսևորումների վերաբերյալ կեղծ պատմություններ: 2019 թ. նոյեմբերին Երևանում մի խումբ արվեստագետներ կազմակերպել էին 21-րդ դարի հայկական պոեզիայի հիման վրա մոդեռնիստական պիեսի հանրային բեմադրություն: Մի խումբ ցուցարարներ ընդհատեցին բեմադրությունը և հարձակվեցին դերակատարներից մեկի վրա. ցուցարարներն անվանեցին բեմադրությունը «սատանիստական» և «հակահայկական», իսկ ցուցարարներից մեկը պնդում էր, որ բեմադրությունն արտահայտում է դերակատարների համոզմունքները նույնասեռական ամուսնության վերաբերյալ:[225] Բեմադրության տեսագրությունը սկսեց տարածվել սոցիալական ցանցերում, հատկապես այն բանից հետո, երբ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը հայտարարեց, որ դրամաշնորհ է տրամադրել բեմադրության կազմակերպիչներին:[226] Ուլտրապահպանողական «ՎԵՏՕ» նախաձեռնությունն օգտագործեց այս միջադեպը որպես Բաց հասարակության հիմնադրամներ (ԲՀՀ) Հայաստանի դեմ բողոքի պլատֆորմի մաս՝ չնայած ԲՀՀ-ը հերքել էր բեմադրության ֆինանսավորումը:[227] Պահպանողական խմբերն ու աղբյուրները անհիմն պնդումներ են արել «սատանիզմի» և «հակահայկական արժեքների» մասին այլ կարևոր մշակութային հարցերի վերաբերյալ, այդ թվում՝ Երևանի պետական կոնսերվատորիայի ուսանողական միջոցառումների և Վադեռ լեհական դեթ-մեթալ խմբի՝ նախապես պլանավորված և հանրային իրարանցման հետևանքով ժամանակավորապես չեղարկված համերգի վերաբերյալ:[228]

Այս իրադարձությունները զգալի ազդեցություն ունեն Հայաստանում արտահայտվելու ազատության վրա: Քանի որ արվեստագիտական դրսևորումը դարձել է ազգային արժեքների համար պայքարի մաս, հանրային դեմքերը և պահպանողական խմբերն օգտագործում են մշակույթի և արվեստի մասին կեղծ պատմություններն իրենց քաղաքական պրոֆիլն ամրապնդելու համար: Այս պատմություններն ընդունակ են ոչ միայն հուսալքել արվեստագետին, այլ նաև սպառնալիք են հանդիսանում արտահայտվելու ազատությանն ավելի լայն իմաստով:

## Եզրակացություններ

Այս բաժնում քննարկվող սոցիալական և մշակութային խնդիրները հաճախ հասարակության ուշադրության կենտրոնում են, քանի որ դրանք զգայուն և հուզականորեն հագեցած թեմաներ են՝ երեխաների, ընտանիքի և ազգային արժեքների վերաբերյալ: Այս հարցերի անձնական և զգայուն բնույթը նրանց խոցելի է դարձնում այն մարդկանց կողմից շահագործման համար, որոնք ցանկանում են մանիպուլյացնել հանրային կարծիքը: Վերոհիշյալ պատմություններից շատերը հիմնվում են վախի վրա և հղում անում ընտանիքներին, ավանդույթներին և ազգային անվտանգության սպառնալիքներին, և, լսարանի ուշադրությունը խթանելով, պահպանում հասարակության զգայունությունը նման հարցերի հանդեպ: Ավելին՝ այս բաժնում քննարկված թեմաները սեպեր են հանդիսանում, որոնք արտացոլում են հասարակության բացերը, որոնք կարող են և հեշտությամբ շահարկվում են՝ քաղաքական առավելություններ ստանալու համար: Քանի որ ավելի հաճախ ապատեղեկատվական պատմություններ ծավալվում են հասարակությունը մասերի բաժանող խնդիրների շուրջ, ավելի է մեծանում հետագա բևեռացման վտանգը. սա շատ մտահոգիչ ոիսկ է Լեռնային Ղարաբաղի

երկրորդ պատերազմից հետո Հայաստանի վերականգնման ֆոնին, որի արդյունքում հասարակության պատկերացումները ապագա կառավարության վերաբերյալ բաժանվեցին:

Հասարակական մակարդակում նման հարցերի մանիպուլյացումը խոչընդոտում է ներառական և հանդուրժողական համայնքի զարգացմանը, ինչն անհրաժեշտ է կայուն ժողովրդավարական զարգացման համար: Այս բաժնում քննարկված մի քանի պատմություններ վերաբերում էին հատկապես այնպիսի խոցելի խմբերի սոցիալական բացառմանը, ինչպիսիք են ԼԳԲՏ+ համայնքը և մարդու իրավունքների ոլորտում աշխատող կազմակերպությունները: Այս ֆենոմենը ոչ միայն կարող է խորացնել անհանդուրժողականությունն ու իրավազրկումը, այլև վտանգում է անհատների մարդու իրավունքներն ու անվտանգությունը: Ավելին՝ սոցիալական և մշակութային խնդիրները սերտորեն կապվել են ազգային քաղաքականության հետ: Պահպանողական խմբերը ապավինել են Ստամբուլյան կոնվենցիայի, երեխաների կրթության և ազգային արժեքների մասին կեղծ տեղեկատվությանը՝ քաղաքական դիրքորոշումները սասանելու և պետական պաշտոնյաներին և ազատական քաղհասարակությանը վարկաբեկելու համար: Արտահերթ խորհրդարանական ընտրությունների ֆոնին այս բաժանարար պատմությունները կարող են հատկապես ծանր հետևանքներ ունենալ:

Հանրության շրջանում մեդիագրագիտության ցածր մակարդակը և ցածրորակ լրագրությունը՝ փաստերի ստուգման թույլ մեխանիզմներով, նպաստում են կեղծ պատմությունների տարածմանը: Էական դեր են խաղում նաև քաղաքացիների հետ պետական հաղորդակցության թույլ կողմերը: Լանզարոտեի կոնվենցիայի վավերացումը, որ տեղի ունեցավ COVID-19 համավարակի ընթացքում առանց հանրային լայն քննարկման, վառ օրինակ է: Հապճեպ գործընթացը զարկ տվեց այն ընկալումներին, թե ինչ-որ կարևոր բան տեղի է ունեցել շտապողականորեն և առանց թափանցիկության, և կեղծ պատմությունները շահում էին պաշտոնական տեղեկատվության պակասից: Չկարողանալով արդյունավետորեն հաղորդակցվել հանրությանը հուզող հարցերի շուրջ՝ պետական պաշտոնյաները ռիսկի են դիմում ստեղծել տեղեկատվական վակուումներ, որոնք ապատեղեկատվությունը կարող է հեշտությամբ լրացնել:

ԼՂ երկրորդ պատերազմը կտրուկ փոխեց Հայաստանում հանրային առաջնահերթությունները՝ կենտրոնացնելով ուշադրությունն ազգային անվտանգության և գոյաբանական ռիսկի հարցերի վրա: Պատերազմից հետո սոցիալական և մշակութային խնդիրները հասարակական դիսկուրսում ավելի փոքր դեր են խաղացել, քան 2019 և 2020 թվականների սկզբին: Այս հարցերի հետ կապված երկարատև կեղծիքները, ինչպես նաև անճիշտ պատմությունների ալիքներն, այնուամենայնիվ, հետևանքներ են թողնելու Հայաստանի ապագայի վրա: Օրինակ՝ ընտանեկան ավանդույթների և ազգային արժեքների վրա կենտրոնացած պատմություններն ուղղակիորեն կապված են ժողովրդագրական մտահոգությունների, պատերազմի գոյաբանական ռիսկի և տրավմայի հետ: Ավելին՝ սոցիալական և մշակութային տարաձայնությունները Ստամբուլյան կոնվենցիայից մինչև մանկության կրթության թեմաների շուրջ մնում են քաղաքական նպատակների համար շահարկման վտանգի տակ:

# Եզրակացություններ և առաջարկություններ

Այս զեկույցում տեղ գտած ուսումնասիրության և վերլուծության հիման վրա մեր վերլուծաբաններն ունեն հետևյալ առաջարկությունները Հայաստանում կեղծ տեղեկատվության, ապատեղեկատվության և կեղծ պատմույթների խոցելի ձևերի հետ կապված խնդիրների լուծման ուղղությամբ: Այս առաջարկությունները թեմատիկորեն ուղղորդված են և ներառում են առաջարկություններ կառավարության, օրենսդիր մարմնի, անկախ վերահսկող մարմինների, լրատվամիջոցների, քաղաքացիական հասարակության և միջազգային գործընկերների համար: Որոշ առաջարկություններ վերաբերում են այն քայլերին, որոնք այս խմբերին հնարավորություն կտան դիմակայել կեղծ, աղավաղված և վնասաբեր պատմույթների անընդհատ աճող ալիքին, որոնք մշուշում են Հայաստանի տեղեկատվական դաշտը: Այս գործընթացը, սակայն, ենթադրում է երկարաժամկետ փոփոխություններ երկրի լրատվության ոլորտում, ներքին և միջազգային տեխնոլոգիական կարգավորման և օրենսդրության մեջ, ինչն արդեն սույն զեկույցի շրջանակներից դուրս է: Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է վստահ լինել, որ հայերն ունեն իրենց տեղեկատվական դաշտում տեղորոշման գործիքներ: Հետևաբար, առաջարկությունների մեծ մասը վերաբերում է հավասարման պահանջարկի կողմին՝ նպատակ ունենալով նվազեցնել ապատեղեկատվության նկատմամբ սոցիալական զգայունությունն ու ընկալունակությունը: Նման մոտեցումները կօգնեն զարգացնել երկարաժամկետ դիմացկունություն: Որոշ առաջարկություններ ուղղված են նաև վնասի մեղմացմանը, մասնավորապես, կեղծ տեղեկատվության արդյունքում ուղղակիորեն վտանգված ժողովրդավարական արժեքների վրա հիմնված համայնքներին և կազմակերպություններին հասցված վնասի մեղմացմանը:

- **Վերականգնել հասարակության վստահությունն ու ազգային երկխոսությունը.** կեղծ տեղեկատվության և ապատեղեկատվության ամենամեծ վնասը կրել է քաղաքացիների և պետության միջև վստահությունը, քանի որ ապակողմնորոշիչ պատմույթների մի խումբ նպատակ ուներ քայքայել պետական մարմինների, գործընթացների և առաջարկությունների օրինականությունը հասարակության աչքում: Պետական աղքատիկ հաղորդակցությունը կարևոր հարցերի շուրջ, հատկապես՝ Լեռնային Ղարաբաղի երկրորդ պատերազմի և COVID-19 համավարակի մասին, արագացրեց վստահության անկումը: Պետական հաստատությունների նկատմամբ վստահության վերականգնումը և ամրապնդումը Հայաստանի կառավարության համար պետք է լինի առաջնային, գերակա խնդիր, երկարաժամկետ գործընթաց, որը կնպաստի երկրի հաջողությանը՝ ապատեղեկատվության և ժողովրդավարության խաչմերուկից այն կողմ ավելի լայն առաջընթաց ապահովելու գործում: Սա ներառում է ընտրությունների ամբողջականության պաշտպանությունը՝ ազատ և արդար գործընթացի ապահովում, անկախ մշտադիտարկման և դիտորդական ջանքեր, ընտրախախտումների ուսումնասիրում և ընտրությունները լուսաբանելու լրագրողական հասանելիության ապահովում:

Կեղծ պատմույթների և տեղեկատվական արշավների աղմուկն ու աղավաղումը կարող է մթագնել ազգային իրական դիսկուրսը: Քանի որ Հայաստանն առերեսվել է պատերազմի հետևանքներին, բուժվում է COVID-19 համավարակից և գնում է դեպի արտահերթ ընտրություններ, երկիրը գտնվում է թե՛ խորը խափանման, և թե՛ փոփոխությունների հնարավորության առջև: Անհրաժեշտ է, որ քաղաքացիների կարիքները, մտահոգությունները և նկրտումները ազգային մակարդակով լսվեն պետության, համաքաղաքացիների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և այլ համապատասխան մարմինների կողմից: Հայաստանի իշխանությունները պետք է երկրին ազգային երկխոսության մեջ ներգրավելու ուղիներ գտնեն. միջոց տարբեր շահագրգիռ կողմերին (հասարակություն, համայնքային կազմակերպություններ, քաղաքական խմբեր, պետական և ոչ պետական դերակատարներ) արդյունավետ զրույցի մեջ ներգրավելու՝ սովորելու և ապագայի տեսլականը կառուցելու համար: Հայաստանում նման ներգրավվածությունը կարևոր քայլ կլինի ինչպես ազգային վերականգնման, այնպես էլ ապագայի ռազմավարական պլանավորման գործում:

- **Որդեգրել տեղեկատվական անվտանգության ռազմավարական մոտեցում**, ներառյալ հետևյալ միջոցներով.

  → **Ամրապնդել պետական հաղորդակցության ռազմավարությունը.** պետական պաշտոնյաների և կառույցների կողմից թույլ հաղորդակցությունը սրել է ապատեղեկատվության հանդեպ հասարակության խոցելիությունը՝ հաճախ թողնելով տեղեկատվական վակուումներ, որոնք կարող են լրացվել կեղծ պատմույթներով: Իշխանությունները պետք է հստակ սահմանեն այն ռազմավարությունները, որոնցով առաջնորդում են հասարակության, լրատվամիջոցների, անկախ վերահսկող մարմինների և քաղաքացիական հասարակության հետ հաղորդակցվելիս: Սա ներառում է այն արժեքների վերագնահատում, որոնք առաջնորդում են պետական հաղորդակցությունը, գործադիր և օրենսդիր մարմինների հաղորդակցությունները տարբերակող գործընթացների և դրանց մեջ առկա հավասարակշռության գնահատում, կենտրոնացում ճշգրտության, արդիականության և թափանցիկության վրա: Մասնավորապես՝ զգայուն, հակասական կամ հրատապ հարցերի վերաբերյալ նախաձեռնողական հաղորդակցությունը կարող է կանխել կեղծ պատմույթների տարածումն ու արմատավորումը:

  → **Ստեղծել օրենսդրական համապարփակ ռազմավարություն.** կեղծ տեղեկատվությունը, ապատեղեկատվությունը և դրանց հետ կապված տեղեկատվական խնդիրները աներևակայելի բարդ են և չեն կարող լուծվել հատուկ վարքագիծը թիրախավորող սովորական միջոցներով: Ավելին՝ պետական պաշտոնյաների համար կարևոր է կեղծ տեղեկատվությունն ու ապատեղեկատվությունը հասկանալ որպես հստակ երևույթներ, և ոչ թե դրանք հավասարեցնել ատելության խոսքին կամ զրպարտությանը: Այս զեկույցը խորհուրդ է տալիս ստեղծել օրենսդրության համապարփակ ռազմավարություն տեղեկատվական տարածքում: Այս գործընթացում պետք է ներգրավել կարևոր շահագրգիռ կողմերի (գործադիր և օրենսդիր, վերահսկիչ մարմիններ, լրատվամիջոցներ և քաղհասարակություն) և ձգտել հավասարակշռել ազատ արտահայտվելու իրավունքը և քաղաքացիներին և ժողովրդավարական ինստիտուտներն ապատեղեկատվությունից պաշտպանելու անհրաժեշտությունը: Հայաստանը միայնակ չէ այս խնդրին դիմակայելու հարցում, և քաղաքականություն մշակողները կարող են ուսումնասիրել լավագույն փորձն ամբողջ աշխարհում՝ գտնելու Հայաստանի եզակի խոցելի կողմերին համապատասխան մոդել:

  → **Աջակցել անկախ լրատվամիջոցների զարգացմանը.** անկախ, փաստերի վրա հիմնված լրագրությունը կարևոր է կեղծ տեղեկատվությանը հակազդելու և ժողովրդավարությանը սատարող տեղեկատվական միջավայր կառուցելու համար: Կեղծ պատմույթներին ուժեղ, անկախ լուսաբանմամբ հակադրվելն ինքնին կատարյալ լուծում չէ: Այնուամենայնիվ, ճշմարիտ դիսկուրսին աջակցող և տեղեկատվական մանիպուլյացիան մերժող միջավայր ստեղծելը կդառնա ապատեղեկատվությանը հակազդելու հիմքը, և այստեղ առանցքային է անկախ լրատվամիջոցների դերը: Հայաստանում կայուն ժողովրդավարության հիմնական խոչընդոտներից մեկը լրատվական

միջավայրի թուլությունն է: Մարտահրավերները ներառում են պատկանելիության վերաբերյալ ոչ թափանցիկ ինֆորմացիա, թույլ խմբագրական անկախություն և սահմանափակ ֆինանսական միջավայր (մասնավորապես՝ ֆինանսապես կայուն մոդելների պակաս): Հայաստանի կառավարությունը և դոնորները պետք է աջակցեն անկախ լրատվամիջոցների զարգացմանը՝ ֆինանսական կենսունակության, տեխնիկական աջակցության և օրենսդրական բարեփոխումների բազմազան տարբերակների միջոցով:

